


15628  
15629  
15630

355 1910  
- 80



ՀՅՈՒՅՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԿՐԵԱԿԱՆ ԽՈՎԱԴՈ

ԳԵՐԱՊԱՏԻՒ ՀԱՅՐ

ԽՈՐԴՆ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ՍՏԵՓԱՆՔԻ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ

ԱԽԱԼՅԱՆԱՅՈՒՄ



ԹԻՖԼԻԶ

ՅՈՒՀԱՆՆԵՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ

ՕՐԲԵԼԵԱՆ ՓՈՂՈՑ № 1 | 2

1885

2347

## ԳԵՐԱՊԱՏԻՒ ՀԱՅՐ

ԽՈՐԵԿԱՆ ԽԱՅՐԱԿՈՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՍՏԵՓԱՆՔԻ

ԳՈՐԾՈՒԽՈՒԹԻՒՆԻ ԱԽԱԼՅԱՅԱՅՈՒՄ



275/  
41

Дозволено цензурою. Тифлисъ, 10 Октября 1885 г.  
Типогр. И. Мартиросианца, Орбел. ул., № 1/2.

Եւրով 1884 թուին ապլիլում և յուլիսում Գերապատիւ Խորէն Ծայրագոյն վարդապետ Ստեփանէկ Սխալցխայում ուսումնաբանները տեսուչ և միենայն ժամանակ յաջորդ լինելու համար Սինօդին գնալիք երկու խնդիրները ոմանք ման էին ածում քաղաքում ստորագրելու, միտեանց ասում էինք. Էհ միենայն է, մի վարդապետ կամ եպիսկոպոս պիտի լինի Սխալցխայում երբեւ յաջորդ. Ըստ չլինի Մարկոս վարդապետը, թող լինի կիրակոսը, ոսովհետեւ բոլորն ևս միենայն են, միայն այն տարբերութեամբ, որ մինը խելքը, միտքը աւելի ուտելուն է տուել, միւսը—փող հաւաքելուն, երսորդը—եկեղեցում երգելուն. Այս և այսպիսի մտքեխով սառն կերպով ստորագրեցինք և Խորէն Ծայրագոյն վարդապետ Ստեփանէկ համար երբեւ եզած չեղած մի բան և ուղարկուեցաւ Սինօդ, թէև սակաւաթիւ հանացողները մեզ միշտ կրկնում էին թէ կատարենք ինչ առ վարդապետ պիտի գայ: Անցաւ երկու երեք ամիս և խնդիրի պատասխան՝ եկաւ Հայր Խորէնը: Սովորութեան համեմատ մեզանից ոմանք գնացինք տեսնուելու Հայր Խորէնի

հետ. խօսակցութեան ժամանակ լուսաւորութիւն, գետութիւն, ջշմարտասիրութիւն, արդարութիւն, աղքատսիրութիւն և այլն բառերը մեզ չպարմացին, որովհետեւ սկզբում ամենքն ևս բարձր բաներից են բռնում: Լաւ, «ասացինք, այդպէս մարդեկ շատ ենք տեսել»: Վերջապէս հոկտեմբեր ամսում Հայր Խորէնը կանգնեցաւ գործի գըլում իրսկ տեսուչ Կարապետեան—արական և Եղիսաբէթեան—իգական հոգեւոր գոլոցների և իրսկ յաջորդ Ալսալցիսայի և Ալսալքալաքի վիճակին: Ե՞հ, ասացինք, հեմայ կը տեսնենք քո լուսաւորութիւնը, քո արդարասիրութիւնը և այլն:—Մտքերով և լրարու այս կասէնք, մինն էլ տեսնենք շաբաթ երեկոյեան առաջին ողջոյնի և խաղաղութեան համառօտ քարոզից յետոյ, իլւրակէ օրը գուրս եկաւ եկեղեցու բեմ և սկսեց քարոզել. քարոզի նիւթն էր յաղթել կը քերին և ոչ թէ կը քի ազգեցութեամբ գործել, ապա թէ ոչ մարդը կը կորցնէ իւր մարդկային արժանաւորութիւնը: Քարոզի մետքը լաւ էր. միայն մի բան մեզ մի քիչ զարմացրեց, ինչպէս է որ սա առհասարակ քարոզիների ձեւերը գործ չդրեց. այն է մի երկու խօսք ասելուց ետքը ոչ երեսը սրբեց թաշկինակով, ոչ քթալսուա ընդունեց, ոչ հազար: Մտքերի և բառերի անընդհատ միմիանց յաջորդելը մեր կասկածանքը վերագրեց Հայր Խորէնի ուսումին, թէ մեր կասկածանքը վերագրեց:

Հայր Խորէնի քարոզչութեան մասին թողնելով յետոյ խօսելու, այժմ գառնանք նորա տեսչութեան:

Տեսչութիւնն ընդունելուց հազիւ անցել էր երկու շաբաթ, երբոք ուսումնարանների թէ օքիորդները և թէ աղաները թաղերի բաժանուած սկսեցին տուն գնալ դասերից վերջը, այն ենչ առաջ կարծես թոկլից փախածներ լինէին, որովհետեւ կոփի, ազագակ շատ հազուագիւտ բաներ չին: Առաջին անգամ տեսնելով այդ կարգադրութիւնը, մեզ բաւական միջթարեց, որից յետոյ մեզանից ոմանք հարցուցին իրանց երեխաններին թէ գալուցում ու ըիշ լինչ կարգ ու կանոն է արել Հայր Խորէնը: Երեխանները մէկը միւսից յետոյ մեզ պատմում էին գոլոցում եղած նոր կարգադրութիւնների մասին, որ Հայր Խորէնը իրաքանչիւր գասարանում զնելէ տուել արկղիկներ, աւելներ, որպէս զի իրաքանչիւր գալուց վերջը օրապահ աշակերտը կամ աշակերտուհին յատակի վերայ եղած թղթե կառները և ուսիշ թափթափած բաները ժողովելով լցնէ արկղիկը և աւելով մաքրէ փոշին, եթէ կայ: Խրագանչիւր փոփոխութեանը օրապահը պարտական էր դասարանի պատուհանները բանալ օդի փոխուելու համար: Խոկ երեխանները մէջ մըցումն առաջ բերելու համար սահմաննել էր բացի իւր հրապարակական քաջալերական և յանդիմանական խօսքերից՝ ու, սպիտակ և կարմիր տախտակներ, որոնցից առաջինի վերայ գըուում էր վատ վարք ունեցող երեխայի անոնք և ազգանունք, կարմիր տախտակի վերայ—եռամսեայ աշխատութեան համար որեկից առարկայից հենք ստացողի ազգանունը և անունը, իսկ սպիտակ տախտակի վերայ—լաւ և բարք վարք ունեցող երեխայի ա-

նունը: Բացի դորանկց ամենայն շաբաթ օր դասերեց վերջը թէ տղաներն և թէ օրիորդները հաւաքուում էին միասին, ուր Հայր Խորէնը կարդում էր երաքանչիւր աշակերտի կամ աշակերտուհու 0 1 և 5-երը. 5 ստացող երեխալին շնորհակալութիւն էր յայտնում, իսկ 0 և 1 ստացողներին բոլոր երեխաների ներկայութեամբ դուրս էր կանչում և խրատում էր, քաջալերում էր նմանի այն երեխաներին, որոնք 5-եր են ստանում: Ինչպէս ուսուցիչներից լսում էինք այս ձեզ բաւական զարկ էր տուել ծոյլ երեխաներին:

Անցաւ մի երկու ամիս և աշակերտները և աշակերտուհիները ունեցան իրենց համազգեստները: Բացի դուսանից, լնչալիս լսեցինք ուսուցիչներից և նոյն իսկ Հայր Խորէնից, դպրոցը չքառը՝ բայց ընդունակ և յառաջադէմ երեխաներին շորեր պատրաստել տուեց իրքեւ մի տեսակ վարձատրութիւն լաւ սովորելներուն համար: Զքաւոր յառաջադէմ երեխաները ոչ միայն համազգեստ, այլև գլխնոց, գուլպայ, ոտնամաններ ստացան:

Երեխաներից բարձր գասարանների աշակերտները և աշակերտուհիները ամենայն կերպակէ Ա. պատարագին ներկաւ էին լինում կարգով, լուսութեամբ կանգնած, որոնց հսկում էին իրենց վերակացուհիները և վերակացուները: Պատանիների եկեղեցում լուռ, կարգով, խելացի կանգնելները տեսնելով՝ շատ անգամ սրտերս լցուելով մեր աղօթքների մէջ խնդրում էինք Աստուծուն, որ այդ պատանիներից ապագային առողջամիտ Հայրեր, մայրեր շնորհէ մեզ կատարեալ մարդու ամե-

նայն լաւ յատկութիւններով և Հայի հոգով: Հայը Խորէնը սահմանեց աշակերտական գանձակ, որի արդիւնքից մասամբ հոգացուում էր երեխաների շորերի ծախսը: Ամենայն շաբաթ օր երեխաների յառաջադիմական և յետագիմական ցուցակը կարգալուց յետոյ 7—800 երեխաները միասին «Հայր մեր» ասելով՝ սկսում էին գոյգ գոյգ դուրս գալ, տուն գնալու համար և որի սրտից ինչ որ անցնէր՝ մի օրեւցէ սև փող ձգում էր գանձանակը, որը մի աշակերտ տղաները և մի աշակերտուհի օրինութիւնների գանձանակները պահած ունին դահլիճի դրան մօտ: Բացի երեխաների կամաւոր նուէրներից, գանձանակի աղբեր էր նմանակի տղաների մեռելաթաղի և կնունքի մասնակցութիւնը, որոնցից ստացած փողերը ամենայն արդարութեամբ Հայը Խորէնի առաջ՝ ձգում էին գանձանակը: Մի տղայ և մի օրինորդ պահում էին գանձանակի հաշիւր: Մենք մեր գործերով գրադուած լինելով, չ'գետէինք թէ դպրոցում ուսումն որքան է յառաջ գնացել, բայց զարմանում էինք, թէ այն երեխաները, որոնց ձեռին առաջ հազիւ էր գիրք տեսնուում, այժմս ամեն երեկոյ կարդում էն իրենց գրքերը և գրում, որից հասկանում էինք թէ գմբոցում պարապում են և դաս պահանջող կայ: Անկասկած երեխաների լուութիւն և ուշագրութիւն ձեռք բերելը նպաստաւոր են նոցա մըտարական յառաջադիմութեան: Շաբաթելուն, որին երբէք ուշք չ'էր գարձնուում, տեսանք որ փոքր գասարաններում ես սկսեցին պարապեցնել երեխաներին:

Ամենայն շաբաթ՝ երեկոյ Հայր Խորէնի մօս լինում էին մանկավարժական ժողովներ, ուր, լինչ-սէս լսում էինք ուսուցիչներից, քննուում էին դպրոցական կարեռ հարցեր և մանրամասն արձանագրուում և վերջին ժամանակները մինչեւ անդամ քննուելիս են եղել փորձական դասեր։ Մի- ևնոյն ժամանակ իւրաքանչիւր ուսուցին առաջարկուել է իւր առարկայի պրոգրամմա թէ այս տարի մրգան և ինչ ձեռվ պիտի սովորեցնէ աշակերտներին իւր առարկայից։ Եւ ամեն երեք ամիս մի անգամ ուսուցիչները ներկայացնում էին դրաւոր հաշիւ, թէ ինչ են աւանդել նախընթաց երեք ամսում։

Հայր Խորէնի տեսչութիւնը որքան իմացել ենք և տեսել, դպրոցի արտաքին կազմակերպութեան մասին շատ և շատ կարեղոր, անհրաժեշտ և էական էր, իսկ դպրոցի ներքին կազմակերպութեան մասին կարող են ուսուցիչները խղճով վկայել, ու ովկիեալ այդ նոցա աւելի հասկանալի է և մօտենի, թէ մեզանից Հայր Խորէնին այցելողներն ես այդ մասին մեջտ գոհունակութեամբ են խօսում ասելով, որ Հայր Խորէնը ուսումի բուն նպատակն է դիմում, այսինքն նա ուզում է, որ երեխաները մեծանալով լինին աշխատասէր և ազնիւ մարդեկ, որ նոքա սիրեն ճշմարտութիւնը, ուսումը, քան թէ մի քիչ այք ու բեն իմանալով ընդունակ լինին կեանքի և մարդկութեան ամենայն վատ կողմերին։ Մե խօսքով կարելի է ասել, որ Հայր Խորէնը երեխային կամենում է նախ մարդ պատրաստել և ապա կարդացող։—Մեր դպրոցների ծրա-

գիսը աւելի բարձրացնելու համար Հայր Խորէնը ժողովով արդէն արձանագրութիւն կազմեց Ախալցխայում փոխանակ դպրոցի Դավանոց ունենալու մասին և ընդհանուր ժողովի կազմած արձանագրութիւնը արդէն ուզարկուած է Սբբագան Ախուուքը։

Դժբաղդաբար մարտ ամսի Յ-ին Ախալցխայի Հոգեւոր դպրոցները Տէրութեան հրամանով փակուելով, բաղդ չունեցանք երեխաների մտաւոր գարգացումն ևս տեսնել, թէ և այժմս արդէն համգուած ենք, որ երեխաների մտաւոր կողմն ևս անցեալ տարիներից անհամեմատ աւելի յառաջ գնացած պէտք է լինի, քանի որ ամենայն կարեւի եղած կարգադրութիւն, հսկողութիւն, քաջաւերութիւն անում՝ էր Հայր Խորէնը։

Վերել ասացինք, որ Հայր Խորէնը բացի տեսչական պաշտօնից և յաջորդ նշանակուեցաւ Ախալցխայի և Ախալքալաքի։ Գերապատիւ Հօր յաջորդական գործերը մեզ աւելի մօտ և ծանօթ են։ Ախալցխայի Հոգեւոր կառավարութեան իբրև նախագահ ամենայն գործ այն սիրով, արդարութեամբ, խղճով և Ճշմարտութեամբ վարում է, ինչպէս իւր սեփական մի ամենակարեսը գործ։

Թէ վազուց է, որ ձայնագրութիւն կայ Ախալցխայում, բայց մինչեւ վերջին ժամանակներս, այսինքն մինչեւ Հայր Խորէնի Ախալցխայում յաջորդ լինելը, ձայնագրութիւնը աւելի երգելի համար էր գործադրուում, քան թէ եկեղեցական շարականների համար, շատ կարեւորութիւն չ'էր տրուում ձայնագրութեան, մանաւանդ որ առանց ձայնագրու-

թեան ժամասացութիւնը աւելի շուտ էր վերջանում, քան հիմնկուանը։ Հայր Խորէնը ձայնագրութեան նշանակութիւնը բնկած դրութիւնից բարձրացուց և այժմ մենք եկեղեցում միայն տղաների երգեցողութիւն ենք լսում, փոխանակ առաջուան հին երգեցողութեան, որ մի շարական երգելու ժամանակ զանազան հասակի և զանազան հմտութիւն ունեցող անձների ձայներ լինելով, առանց ներդաշնակութեան և առանց չափի էր երգուում։

Սխալցխայի մայր եկեղեցու համար երգեցի խումբ պատրաստելին յետոյ Հայր Խորէնը սորանից երկու երեք ամիս առաջ սկսեց խօթակիներ պատրաստել մեր միւս եկեղեցիների համար ևս, որոնք ինչքան կարողանում են սովորել մի շաբաթում, նոյնքան ևս երգում են եկեղեցիներում։

Հայր Խորէնի իւր վեճակի քահանաներին տուածդասերի, յորդորների համար յշում ենք նորա շրջաբերականը, որը համարեա միշտ լրինելով մեր քահանաներին յորդորում է աւելի բարեվայել կեանքով երեւլ։ Ի՞նչ սկզուն կերպով բացատրուած է այդ շրջաբերականի մէջ քահանայի կոչման նըշանակութիւնը, որ քահանան միայն ներքին մարդու համար ևելթ գոյութիւն ունի, ինչպէս բացատրուած է խոստովանութեան նշանակութիւնը։ Ի՞նչպէս յորդորում է Հայր Խորէնը քահանաներին միշտ քարոզելու; Թէև հարկաւոր էր այդ շրջաբերականը ամբողջապէս գուրս բերել այստեղ, բայց առանձին հրատարակուած լինելով միայն այս կատենք, որ եթէ քահանան այդ բոլորը կատարէ, ինչ

որ շրջաբերականի մէջ կայ, այն ժամանակ նա կանգնած կը լինի այն քահանայի ձանապարհի վերայ, որի մասին լուցինք վարդանանց տօնի օրը։ Բայց դառնանք Հայր Խորէնին, որի քարոզը՝ խօսքը և գովծելը միմեանցից երբէք չեն բաժանուում։ Հայր Խորէնից առաջ մենք շատ հազիւ քարոզներ էինք լսում, իսկ այժմ համարեա ամէն կեւբակէ եկեղեցու բեմից լսում ենք կենզանի քարոզներ, երբ խօսում է Հայր Խորէնը։ Մենք երբէք չենք մոռանայ նորա մանաւանդ աւագ Ուրբաթի, Զատկի և էջմիածնի տօնի առթիւ խօսածները. ինչքան մենք տեսել ենք և լսել քարոզներ, ոչ մինը մեր վերայ այն զմայլեցուցիչ ազդեցութիւնը չէ թողել, ինչ որ թողնում են Հայր Խորէնի քարոզները։ Արդեօք որ Հայ քրիստոնեան, որքան ևս զբաղուած լինէր աշխարհային գործերով, երբ լսէր «աւագակի զդջման» քարոզը, չ'պիտի նորոգուէր, որ քրիստոնեան Յովհաննէս Յկրտչը տօնի օրուան քարոզը լսելով սուր տապարով չպիտի կտրէր իւր անօրէն գործերն և տար արժանի պըտուղնեց (աշաւասիկ տապար առ արմին ծառոց դնի)։ Արդեօք կը գտնում մի սկըտ, որ Քրիստոսի թալման օրուան քարոզը մոռանայ և Գրիգոր Լուսաւորչի օրուան քարոզով իւր մեղքերը չ'զջայ։ Էջմիածնի տօնի առթիւ ասուած սրտառուց և կենդանի խօսքերը ամենալավածառ, ամենասառուցեալ սրուերն անգամ ջելմացնող և կարծես ցեմենտով շաղկապող խօսքեր էին Մայր Աթոռի հետ։ Վերջապէս նորա խօսած ժամանակ մինչև անգամ եթէ չ'կամենաս, ակամայ թողնում ես քո ամէն

մատածմունքները և նորա հետ ման ես գալիս երբեմն Յորդանանի եղերքը, երբեմն Քրիստոսի դագաղի շուրջ, երբեմն մի ժամում տեսնում ես Սուրբ Հջմիածինը Լուսաւորչից մինչև մեր օրերը. մի խօսքով ինչ նիւթի մասին որ խօսում է Հայր Խորէնը, նորա հետ ման ես գալիս նիւթի մէջ և մոռանում ես ամեն բան:

Հայր Խորէնի քարոզները ոչ միայն մեր կրօնական բարեկեցութեան են վերաբերուում, այլ և հարկը ստիպած ժամանակ մեր նիւթականի մասին ևս խօսում է նա: Մեր քաղաքի բուսականութիւնը և մանաւանդ խնձորի և տանձի ծառերը տեսնելով, երկու երեք անգամ եկեղեցւոյ թեմից խօսեցաւ պարտիզանութեան վերայ, թէ ինչքան նիւթական ապահովութիւն կարող է ունենալ մեզ համար պարտիզանութիւնը, որովհետեւ Ախալցիայում խնձորի և տանձի լու տեսակները լինելով, որպէսին Կովկասի մէջ չեն գտնուում, կարելի է մէծ օգուտներ ստանալ դոցանից, ուստի լորդուց ժողովրդեանս հոգ տանել և շատացնել որքան կարելի է պարտիզաներ. մինչև անգամ թթենիներ շատացնելու միտքն ևս արձարձեց, որպէս զի շերամապահութեան ձեռնարկողները հեշտութիւն ունենան: Կարծես Հայր Խորէնը մեզ օրինակ ցուց տայու համար Ա. Փրկիչ եկեղեցւոյ բակում, եւր բնակութեան մօտ երեք ծառ գտնուած տեղը պարտիզ դարձրեց և մշակել տուեց, որից առաջ եկած մրգեղինը և բանջարեղինը ժամանակին բաւական կը լինի յաջորդաբանին և կաւելանայ: Մերայն ցաւալին այն է, որ Հայր Խորէնի քարոզ-

Ները չեն գրուում, որոնք բոլոր քահանաներին կարող էին իրեւ քալոզութեան ձեռնարկ լինել: Հայր Խորէնի անդադար գէպի բարին, լաւը, օգտակարը և գէպի Հշմարիտը գործելը տեսնելով, մեր կասկածանքը հեռացաւ մեզանից, տհանք, որ Հայր Խորէնը—Հայրիկը—այն հոգեորականներից չէ, որոնք իրենց վարժունքով սառեցուցել էին մեզ, ուստի մեր առաջուան կասկածանքը գէպի Հայրիկը փոխուեցաւ անկեղծ սիրոյ: Ուստի հսալաբարակական յայտնում ենք մեր շնորհակալութիւնը Հայրիկին, որ իր Ախալցխայում կարձ ժամանակեայ գոյութեամբ, մօտ մի տարուան ընթացքում, խօսքով, գործով և արդինքով աշխատեցաւ: Հայրիկը դպրոցները և հոգեոր կառավարութեան մէջ կարգ ու կանոն և եկեղեցական դասի մէջ կարգապահութիւն և պարտաճանաչութիւն հաստատելու հոգ տարաւ և տանում է և յոյս ունինք և հաւատացած ենք, որ պիտի հոգայ նոյն ընթացքով քանի որ Ախալցխայումն է:

Անբազդաբար այդ խիստ կարգապահութիւնները և յորդունիրը, որոնց երբէք սոլոր չեն մեր քահանաները, բացի մի քանիսից, սկսեցին հակառակութեան գործողութիւններ ցոյց տալ Հայրիկին երբէք չտեսանք, որ մի գործ կալիք համար կատարէր, այլ ընդհակառակը միմիայն հշմարտութեան, արդարութեան և ընդհանուր օգտաւէտութեան անունով է գործում:

Մեր առ Հայրիկը ունեցած սիրոյ ապացուց կարծես այն խօսքերն են, որ Ախալցխայից անցնող մի պարոն, եկեղեցի մտնելով և տեսնելով Հայրի-

կե եկեղեցական կարգ կանոնը, ասել է իւր ընկերին, որի նամակից մէջ ենք բերում հետևեաւ: «Ես մինչև հիմա չէի հաւատում, թէ մեր հոգեկորականների ներկայ զարգացման մէջոցին մի բան կարելի լինէր յուսալ, բայց այժմտ ես համոզուած եմ, որ հոգեկորականութիւնը իւր բարձր կոչման վերայ կանգնած կ'լինի, եթէ չայր Խորէնի նման հոգեկորականների թիւը բազմանայ մեզանում»: Եթէ այս խօսքերը ասող պարոնը մի հայեացք ևս ձգէր Հայրելի տեսչական գործերի վերայ և իւր սուր աչքերով զիտէր մեր դպրոցների ներքին կեանքը, երեկ այն ժամանակ նոյն մետքը պէտք է յայտնէր Հայրելի տեսչական գործի մասին ևս:

Մեզանից ով պիտի մոռանայ Հայրելի կատարած եկեղեցական հանդէսների շքեցութիւնը: Զրօսհնէքի հանդէսին ամբողջ քաղաքը մասնակցում էր համարեա. և թինչակս չ'մասնակցէր, քանի որ բացի կրօնական նշանաւոր արարողութիւնից, նշանաւոր կերպով ևս կատարվում էր. դպրոցի երեխաններ 700—800 մասնակցի էին հանդէսին. տղաները մի կողմից, օրիորդները միւս կողմից՝ զուգ զուգ համագետները հագած իրենց ուսուցիչների և ուսուցչութիւնների հսկողութեամբ. Հայրելի իւր եկեղեցական դասով և եկեղեցական ամենաստուար սպասներով. տղաների և օրիորդների քաղցրանուագ երգեցութիւն, լրագանչիւր արհեստաւոր իւր դրօշականներով—ահա երկու խօսքով հանդէսի գնացքի մասին. բայց հանդէսը պէտք էր տեսնել և ոչ կարդալ: Մեր մեծերը—ծերերը—

Երաւունք ունէին ասելու թէ. «տահա տիօր ասօր աղպէս միլրութիւն չէինք տեսէց: Իսկ գետի ափին զօրքին ուղղած ուռւսերէն քարոզը հետացրեց միանգամայն մեզ և ուռւսներին և անմոռանալի արեց այդ օրը մեզ համար:—Վարդանանց տօնի օրը այնքան բազմութիւն կար Կարսալետեան—արական դպրոցում, որ ուսուցիչներից շատերը և բոլոր երեխանները բացի երգեցողներից զուրսը մնացին: Թիէ մեզանում կատարուած եկեղեցական հանդէսների մասին ոչ մի լրագրում չգրուեցաւ, բայց հաւատացած ենք, որ ոչ մի տեղ ևս Ալսալցխաչի պէս հանդէսներ չ'եղան:

Երբոր մի մարդու կամ հասարակութեան մէջ ոյժ կայ, որի զօրութիւնը անձը կամ հասարակութիւնը գործում է յօգուա լուսաւորութեան, գետութեան, Ճշմարտութեան, նորա դէմ ընականաբար յառաջ են գալիս գանական խոշնդուներ, որոնք կամնուած են արգելք դնել արդիւնաւոր գործունէութեան: Այգալիսի մի խոշնդունն էր կարծես Ալսալցխաչի այս տարուայ վարցաւքը (ՏԱՓԵ): Քաղաքի և շրջակայ գիւղերի մէջ բաւական տարածուեցաւ հիւանդութիւնը և ունեցաւ իւր զոհերը: Ինչպէս յայտնի է, վարցաւքը վարակիչ (փոփոխական) հիւանդութիւն է. իսկ այգալիսի հիւանդութիւնների ժամանակ եկեղեցիները, բաղանիքները, զարոցները և առհասարակ այն հասսատութիւնները, որոնց մէջ սովորաբար մարգոց բազմութիւն է լինում, հիւանդութեան տարածուելուն կամ աւելի լաւ է ասել փոփոխուելուն վարակման լաւ միջոցներ են: Հետաքրքիր եղող արդա-

բագատ մարդք, կարող է իմանալ, որ Հայրելիք  
բնականէ դուքս սէք և խնամք ցոյց էք տալիս  
Երեխաների հետանդութեան ժամանակի: Դպրոցում  
ամենայն հնարաւոր առողջապահական միջոցները  
գործադրել հրամայելուց յետով, շատ անգամ հե-  
տանդ երեխաների բժշկի այցելութեան վարձը և  
գեղերի գինը ինքն էք վճարում, այնպէս որ հե-  
տանդութեան սաստիկացած ժամանակ ամենայն  
օր կարող էք Հայրելիք սեղանի վերայ տեսնել  
նամակներ, որով չքաւորները կամ բժիշկ էին  
խնդրում, կամ գեղ: Հայրելիք արծաթասէք հոգե-  
տուրականներից չ'վիճելով որքան կարողանում էք  
միշտ օգնում էք կարստեալներին: Եւ վարչաւքի  
առընթեւ պատուական բժիշկների հետ խորհրդակ-  
ցելով եկեղեցւոյ բեմից համարեա առողջապահա-  
կան գասեր խօսեցաւ: Եւ եթէ Հայրելիք չ'աշխա-  
տէք խորհրդով, միջոցով օգնելու գոնէ դպրոցների  
երեխայ հիւանդներին, վարչաւքը աւելի զոհէր  
տարած կը լինէք: Ընթերցող, գուցէ հարցնես,  
միայն ձեր Հայրելիքն էք քաղաքի մէջ չքաւորներին  
նայող, հատակ հարուստներ չ'կան ձեզանում, նոքա  
լինչ էին անում հիւանդութեան ժամանակի: Ճշմարիտ  
է: Ախալցխականում այժմ կան հարուստներից մնա-  
ցած աւերակների բեկորներ, բայց միայն նիւթա-  
կանով, ոչ թէ սրտով:

Վարչակի ժամանակ Հայքի կը ժողովրդեանս  
նկթական կողմէց աննախանձելի գրութեւնը տես-  
նելով, մե քրիստոնեավայել, մարդասիրական  
մշտք լզացաւ. Հիմնել Ալիալցիսալում թժկանոց,  
ուր գլխաւորապէս ամեն ազգի աղքատներ կարո-

զանան ձրեապէս օգտութիւ բժշկական կողմնից, Թէ՛ւ  
բժշկանոցի աղբեւբներ գտնելու ժամանակ բո-  
լորովին անակնունելի արգելքներ յառաջ եկան,  
բայց Հայքիկը ամեն արգելքի յաղթելով տեղիս  
պատուական բժիշկների խորհրդակցութեամբ կազ-  
մեց բժշկանոցի կանոններ և ուղարկեց Հաստա-  
տութեան, ոսք պիտի զետեղուի եկեղեցու բակում  
և տունը արդէն պատրաստ է:

Հայրելը՝ տեսնելով որ աղքատների հոգաբարձութիւնը տարրութերուում էր երբեմն մերժուելով բարեկդուծական ընկերութիւննեց, երբեմն ընդունուելով նոյնիսկ Հայրելի միջնորդութեամբ և հաստատ հիմքի վերաց կանգնած չէր, նորա համար ևս կանոններ կազմելուց յետոյ՝ ուղարկեց Հաստատութեան:

Աղքատների համար եկեղեցներում գանձանակ սահմանեց, որև շրջեցնում են ամեն շաբաթ երեկոյ և կիրակի ս. պատարագին ներկայումս Հայութելիք յօրդուներով բազմութեամբ յաճախող ժողովրդեան մէջ, և թէ աղքատներին օգնելու մասին նորա ասած քարոզների շնորհիւ այժմ ո՞րքան մէծ արդինք է գոյանում, միայնումն միշտ հոգաբարձուները:

Զայելով բազմաթիւ գուռարութիւններին կը  
երգեցի լուսմբը շարունակումէ զարգացնել, տղա-  
ները բաւական հմտացել են ձայնագրութեան  
հետ, և մսիթարելով ժողովուրդը իրանց հիանալի  
երգեցողութեամբ, վայելում են իրանց սիրած Հայ-  
քեկի հայրական լինամքները. 40 տպային գեղեցիկ  
ամառվան համագետ անդամն ակտուել տուաւ:



Մայր եկեղեցու համար Հայրիկը պատշաճաւոր համարեց, բացի ներկայ 4 փոքր զանգակներից, մի մեծ զանգակ ունենալ, հանդիսաւոր օրերի և ամենքին լսելի լինելու համար, մանաւանդ որ եկած օրերից սահմանեց երեկոյեան 6 ժամից մինչև առաւոտն ամբողջ գերեւ ժամեր խփել գեշերապահի ձեռով և կէսօրին ևս 12 ժամ խփել, որ և շատ միսիթարական է նոյնալէս և օգտաւէտ գործ, ուստի ժողովրդեանս յորդորելուց յետով, քահանաներին ստորագրութեան թերթեր բաժանեց զանգակի համար փող ժողովելու, այս վերնագրով. «Ախալցխայի Ս. Փրկիչ եկեղեցու համար 34 փուղանոց զանգակ բերելու, որը յարձար լենէր հնչվելու Ախալցխայի կրօնասէր ժողովրդի բարեկաղտական զգացմունքի համեմատ.» Այս երկտողս ևս ցոյց է տալիս թէ Հայրիկը որքան սիրում է և սովորել է, որ ամենափոքր գործ կամ գրութիւնն ևս առանձին իմաստով և տակտով մինի: Քահանաները հասարեցին 400 մանէթ: Բայց որովհետև Մօսկվայից ապսպազմած էր 34 փուղանոց զանգակը և սիէտք էր մօտ 700 մանէթ, բեսել տալով, ուստի վերջը երեք նշանակուած անձինք յանձն առան սիրով շարունակել նոյն փողը ժողովել և մենք այս օրերս ուրախութեամբ կլսենք նոր զանգակի քաղցր ձայնը:

Ժողովրդեան մտաւոր և բարոյական զարգացումն հոգաւով անդադար, Հայրիկը մտածեց նոյնալէս հետնել Ախալցխայում հասարակական ընթերցարանը միասին հոգեորականների հետ Ուստի ընթերցարանի համարօտ կանոն խմբա-

գրելով, ուզարկեց Թիֆլիս պ. Նահանգապետին Ընթերցարան բանալու թուլուութիւնը խնդրելով: Ընթերցարանը պիտի զետեղուի յաջորդարաններին յարկի մի սենեկակում:

Վերջին օրերս Հայրիկն հրաւիրեց ժողովրդեան նախկին Կարապետնեան դպրոցի աւերակ դարձած շնութիւնը վերանորոգելու համար 6 հոգաբարձուներ ընտրելու և ընտրուեցան պատուական անձնիք և սկսեցին շնութեան հոգացողութիւնները:

Հայրիկի անձնագոհութիւնը տեսնելով այլևս չկարողացանք շնորհակալ չլինել Սրբազն Սինողին Հայր Խորէնի համար, ուստի 600 անձանց ստորագրութեամբ գոհունակութեան թուղթ ուղարկեցինք Սրբազն Սինողին:

Ամենայն բարի և ազնիւ գործունեալ անձնաւորութիւնն անկարեկի է որ չունենայ իւր հակառակ վատ գործողները և անազնիւ անձնաւորութիւնները, ուստի զարմանալու չէ, եթէ մեր Հայրիկի դէմ մի քանի անազնիւ անձինք գործութիւնն ունենան Ախալցխայում, որոնք իրանց գաղտնի գիշերային գործերով վշտացնեն Հայրիկի սիրութ:

Այս պատճառից Հայրիկը երրեւ ազնււ մարդ այն օրերում հեռագրում է Սրբազն Սինողին Եջմանական գնալու համար: Այս բանը լսելուց յետով անմիջապէս կազմեցինք մի հեռագեր և բազմութեամբ դիմեցինք Հոգեոր կառավարութիւնը, հեռագիրը 110 մարդու ստորագրութեամբ վաւերացնել տալով, ուղարկեցինք Եջմիածնի Սրբազն Սինողին, միեւնոյն ժամանակ Հայրիկին խնդրեցինք Հեռագրել, որ այլևս չէ գնալու Եջմիածին, որը շատ

դժուարութեամբ ընդունեց մեր խնդիրը և հեռագրեց էջմիածին, որ մեր թախանձական խնդիրն զեջանելով մնում է. խոր մեր հեռագրեր այսպէս է.

«Հասարակութիւնը իմացաւ, որ յաջորդ Խորէն Ծալբագոյն վարդապէտը ցանկանում է թողնել Ալբացխան մի քանի գրգռվէների, մանաւանդ հարուստների, զանազան զրաբարութիւնների պատճառով: Հասարակութիւնը հանաչեց, հանաչում է Խորէն վարդապէտի օգտակար գործունէութիւնը, սրտանց յարգելով նրան, պարտաւորուած է նեղութիւն տալ Սըբագան Խենօգիւ ամենախոնարհաբար խնդրելով, որ Հայը Խորէնի հեռագեթը անգործագույն մինչև մեր մանրամասն գտութիւնը:»

Հայրիկի ընտիր «Մանկավարժանոցը» Ալբացխայում հրատարակուելով, մեզանից շատերս այս գործի մէջ ևս նորա գոհաբերութիւնը տեսնում ենք, որ բացի իւր աշխատանքի վարձ չստանալուց իւր գրաւնից տարեկան մօտ 400 բուրլի տալիս է տպագրութեան ծախս և համարեա բոլորը, բացի 40 օվլինակից որ ուղարկում է բաժանորդներին, ձրի բաժանում է և ուղարկում է զանազան քաղաքներ:

Հայրիկի բարի, օգտաւէտ գործունէութիւնը տեսնելով, մինը մի կրպակ է նուերում յօգուտ երգեցիկ դպիւներին, միւսը (տաճէկը բանտում եղած ժամանակ) իւր բաժին կալուածքի արդիւնքը, երբորդ յօգուտ բժշկանոցի փող է նուերում և այլն և այլն:

Ընդհանուր ժողովը յունիսի 16-ին ուղղեց, որ մեր հոգեւոր դպրոցների տեսուչ դարձեալ Հայ-

րեկը լինի: Խոր մեր աղեքսագիրը առ Հայքակետն Հայրիկին եպիսկոպոսական բարձր աստիճանին բարձրացնելու համար՝ նոյնութեամբ մտցնում ենք այս գրութեան մէջ, իբրև ժողովրդական հրապարակական ազաշանք անձնուէր Հայրիկին եպիսկոպոսական աստիճանով Հայերիս շնորհելու համար: Ահա մեր խնդրի պատճէնը:

Նորին Վեհափառութեան Սըբագնագոյն Կաթողիկոսի Ամենալին Հայոց և Աստուածարեալ Քահանայապետի Մայր Սթուռոյ Սըբոյ Էջմիածնի Տ. Տ. Մակարաւ:

Ի Հայ Հասարակութենէ Ալբացխայ քաղաքի Ամենախոնարհ խնդրի:

Եւ քանզի մինչ վշտակցէաք խորասուզեալ և ծարայեղ յուսահատութիւն և պղպջաձիգ արտօսը երեկ յեռանդու կաթսաւէ իվեր յոսձանախաղաց սահէին յայտն մեր, և մեք որպէս այր մոլորեալ և Ճանապարհի, այսր և անդր խուժապէաք հանգոյն ոչխարաց անհոգութից և հալածելոց, և հնչէր երկերս մեր, աղաղակ բառնայր ժողովուրդս համայն և յուժգինս ամբոխիւր և խլբաւայր, երբեկ այն թէ և հիմանց խլին և տապալին վլմացեալ լեռինք և անկանին և փրփրաւոյզ ալիսն ովկիւանու և և բերան առեալ մեք զողբսն Երեմիաւէ հանգոյն իսրաւէլի առ գետս Բաբելացւոց և զըկումն և Սիօնէ և յօրինաց և և Կտակարանացն Աստուածայնոց, լայաք յուժգնապէս, այն է և վերայ հասելոց երկոցունց գերագոյն աղեակցն առ առ մեզ, որ և

Վեհափառ Օծութեւն Ձեր արտասուրօք Համարեսցի գրեալ զայս տղէտս:

Առաջինն էր տեսանել սուըրբ զեկեղեցիս մեր անփառս և անշուք, զրկեալ և որբացեալ ի քարոզչէ բանին կենաց, շվոթեալ և վրդովեալ և հեռացեալ ի կարգաց և ի կանոնաց և ի նախնի Հարանց սպառց յօրինեալ քիրսն ջանիւք ներդաշնակաւը Հրեշտակալին քաղցը երգակցութեանց:

Երկրորդ զյետագիմութիւն երկսեռ և աղքալին Հոգելոր ուսումնարանացւ, որք են միայն յոյսք փրկանաւորք և խոսամունք ապագայ բարեաց մերս սերնդոց, և զհայ մանկտին, փոխարէն ուսմանց և զարգացմանց, և դժաշիս տեսանէաք զնոսա յանկիւթ և յանբարոյական վարս և գըրկեալս և գիտութեանց և ի շնորհաց:

Եւ ն արգեօք սգայցէր և հոգայցէր և վարատէլ զտառապանս և գլթալսիծ մերս սրտից, եթէ ոչ Տէրն տաճարաց, Ստեղծէն մանկանց, ձարսուրապետն գիտութեանց և մասսալից և միշտ լինն և Քահանայապետն յաւետենական որ Հայեցեալ և տաճարս իւր սուըրբ և ի մանկունն փլիկեալս արեամբըն անարատիւ, և և սիրտ մեր յուժգինս կարեցիր առ ի ածել և գլթութիւնս զսիրտ Սրբազնագումար Սինօդիկ Սրբոյ Միաձնաէջ Աթոռուց, զիշանել խնդրանացս մերում, շնորհելով մեկ զյոյժ ցանկալին և փափագելին Հաստատեալ յաջորդական և տեսչական պաշտօնալարութեամբն, զհրաշալիսն ներգործեաց, որ Հանգոյն սրբոց նախահարցն Սահկայ և Մեսրովեայ, վերանորոգեաց, ծաղկեցոյց և զարգարեաց ուսմամբ և կրթութեամբ և ներքին և արտաքին բարեկարգութեամբ Հոգա-

քելաշնորհ, բազմիմաստ, քարոզաբան, արիաջան քաջ ըաբունին Խորէն, նախ վսեմ և ոգեզմայլ քարոզութեամբն մատակարարեաց մեզ աւետարանական համար կան կանաչարեաց և զանըստերեւը վարդապետութիւնն և միսկթարելով և սփոփելովին զմեզ, զոմանս ի մէնջ փոխեալս և անկեալս յանհուն հեռաստան և ի խաւարային սառնութիւնս կրօնի էած վերըստին յեռանդ ջերմաջերմ Աստուածալաշտութեան: Եւ Հանձարաւոր երկասիրութեամբն հոգ անձնն յուժգին կմելովն, մեծաշուք զարդարեաց զսուրք զեկեղեցիսն մեր, որք բարեկարգութեամբ քահանայական դասուց և քաղցրագոյն դպրութեամբ մանկանցն բերէին զնմանութիւնն վերինն սիօնի:

Եւ մերթ ընդ մերթ Հայըն Խորէն Հնէց ի սուըրբ բեմէն քաղցրագոյն յորդուրականօք յունկս երկելեաց, փասթամից, մեծատանց և հասարակաց քաղաքիս Հրաժարաբելով զնոսա ի բաց կալ յապերախտ և վնասակալս գործոց, բերելով զօրինակս ի սուըրբ գոց և մարգարէից, առնել զողորմութիւնն, սիրել զնաղաղութիւնն, ի բաց մերժել նենգութիւնն, նախանձ և ատելութիւնն, Հպատակութիւնն, կաշառս անիրաւս և ըստ առաքելոցն չարն քան զամենեսին զարձաթսիրութիւնն:

Խոկ ուսումնարանք մեր փութաջան Հայըն Հնդամսեայ սուզ ժամանական և տեսչական իրաւամբ պաշտօնալարութեամբն, զհրաշալիսն ներգործեաց, որ Հանգոյն սրբոց նախահարցն Սահկայ և Մեսրովեայ, վերանորոգեաց, ծաղկեցոյց և զարգարեաց ուսմամբ և կրթութեամբ և ներքին և արտաքին բարեկարգութեամբ Հոգա-

յաւ սեփական ծախիւքն զաղքատ և զորք սանս նոցին, գգեցուցանելով զհանդերձս և տալով բժշկել զախտս և զցաւս նոցին, և առնէ աշնակս մինչ ցալսօս, որպէս հայր ուրբոց։ Այլև օրինաւոր Հաստատութեամբ կարգեաց զմնամակալս և հոգաբարձութիւն տեղոյս աղքատաց, ընդ սմին գուն գործէ հիմնել և մեղ զհասարակական ընթերցան, զմնդիրն թուլատութեան ուղղեալ առ Պ. Նահանգապետն։ Եւ զնմանութիւնն Մհծի Հայրապետին մերոյ Ներսիսի առ ինքն բերեալ, հիմնեաց և մէջ մեր զբժշկանոց, որ գերագոյն քան զամենայն բարիսն դասաւորեմք։

Արդ Աստուածնատիր Քահանայասետ, իմեր հասուցեալ և գործհաւ զանհամար բարեաց և առաքինութեանց Յասունսն Հայր Խորէն բարունոյն ովուեսցէ, այլ մեք, յոյժ սակաւիին միշատակելով առաջի Զերութդ Վեհ Օծութեան, ուստի ժողովուրդքս Համօրէն նախ երախտագիտական քաղցը և խորին շնորհակալիսն մատուցանեմք Սլբազնագումար Սինօդին Զելոյ, որ մխիթարեաց զվշտակեր սիրտս հաւատարիմ մանկանցս լուսաւորչական մանկանց առաքելական Սուրբ Աթոռոյդ, ընդ որ ազդաբար բանք լարդապետութեանն բարունոյն Խորէնի անխզելի շղթայիւք կապեալ ամբապընդեաց զհոգիս և զսիրտս մեր—ընդ մաւսս մեր Սիօն (ընդ Սուրբ Էջմիածին),

Եւ հուսկ իետոյ, պատասանօք եղեալ զմնդիրս առ ուս Աստուածարեալ Հովուապետիդ յուժգինս Հայցեմք, նախ վերահաստատել կրկին զբազմերախտ Հայր Խորէն Ծայրագոյն վարդապետն Ատեփանէ

տեսուչ և հոգատար ուսումնարանացս, և որպէս սեփական և սիրելի ժողովուրդ ընկալեալ զմեզ, հաճեսցի վեհ Օծութիւն Զեր Հայրախնամ գլութեամբ զիշանիլ ամենաշերմ և ամենըլքալի պաղատանացս մերում, զառաջին արգասին երախարեաց Աստուածահամ Օծութեանդ մեզ չնորհելով, ընդունել արժանընտիրն և վարդապետաց բազմավաստակ և օգտաշահ զէք Խորէն սրաբունին մեր, ձեռնադրել պաշտելի Աջովդ և սուրբ աստիճան Եպիսկոպոսութեան և վերստին զայն պարգեել մեղ, որպէս զընծայս մեծագինս և զանուշահոտ կնդպուկս խնկոց ի բուրումն Տեառն տաճարաց, չմերժելով վասկինս Զեր և նորին արթուն և քաջ հովութենէն։ Որպէս զի և մեք երգիւ տօնեսցուք զնաւակատիս մեր փառաց և աղաղակիսցուք և ձայն ցնծութեան ըստ երգոյն Սոլոմոնի թէ «Եկին գարունն, է անց ձմեռն, այգիք մեր ծաղկեցան և յականջս մեր լոելի եղեն ձայնք տառակաց։ (Խակականին ստորագրել են 834 անձինք, և քահանայիքը սեպտեմբերի 10-ին)։

Վերջապէս Յունիսի 26-ին երբ Հայրիկը Սինօդից հեռագիր սատացաւ էջմիածին գնալու և կածակի սոյն հեռագիրը տարածուեցաւ մեր մէջ, նոյնժամայն շտապեցինք յաջորդալան և Հայրիկին ասելով թէ «մեզ կենդանի թաղիք և այնպէս զնամ» նա պատասխանելով ասաց թէ «Եղբարիներ, քանի որ չարերի դէմ էր մեր գործը, ես անսասան քաջ կերպով արհամարհէլով նոցակ գործս էի շարունակում, բայց այժմս Ս. Սինօդի համանն է, ես իբրև Հայաստանի եկեղեցու

հաւատարիմ որդի և անսուտ հայ անհրաժեշտ պարտք եմ համարում, եթէ բարոյական օրինքի հակառակ ևս երեխը ինձ հրամանը, չնազանդել հայկական եկեղեցու ծայրագոյն իշխանութեանը»:

Այս սրտառուց և իմաստալի խօսքերից յետոյ 318 անձանց ստորագրութեամբ հեռագիր ուղարկեցինք Սրբազն Սինօդը, աղերսելով հոգեւոր գործերին քննիչ նշանակել: Նոյնպիսի աղերսական հեռագիր 18 անձի ստորագրութեամբ ուղարկուեցաւ Սինօդի Պ. Պրօկուրարին ահա 318 անձանց ստորագրած հեռագրի բովանդակութիւնը: «Սուրբ Էջմիածին. Սրբազն Սինօդին: Հասարակութիւնն իշացաւ Խորէն վարդապետի շրատափոյթ պատրաստութիւնները գուրս գնալու մասին Սինօդի հրամանով. և չէ ցանկանում զրկուել նորանից: Աւելի լաւ է հասարակութեան մահը, քան թէ հայր Խորէնին թողնելու. Անհնարին է նորան թողնել: Եթէ Սինօդը չ'զեջանի մէր խնդրին և չթոյլատի հայր Ստեփանէին մնալ, հետևանքները չափազանց տխուր կը լինին, Սորանով Ախալցխայի հասարակութիւնը հեռացրած կը լինի եկեղեցուց: Հնարաւոր է միթէ զոհ բերել ամբողջ ժողովրդի օգուտը և բարեքը քանի մի անձանց կրքերին: Մէնք ցանկանում ենք, աղերսուն ենք ուղարկել քննիչ: Սա ամբողջ հասարակութեան ցանկութիւնն է. սա կուսակցութեան գործ չէ: Գալիս են երկու ընտրուած պատրամաւորներ»: Յունիսի 28-ին կայացաւ ընդհանուր ժողով՝ 500 անձից սուսիկանութեան ներկայացուցիչների ներկայութեամբ և

Երկուսի մոխանակ չորս պատգամաւորներ ընտրեցին Սուրբ Էջմիածին ուղարկելու քննիչ խնդրելու: Սոքա ընտրուեցան. Յարութիւն Արաբաջեան, Մկրտիչ Զրկելեան, Յովհաննէս Նալբանդեան և Խաչատրուր Քոսեան: Ընտրական թուղթը և քահանաների գէմ բողոքը ստորագրեցին 500 անձինք: Ամսի ՅՈՒ-ին պատգամաւորները ճանապարհորդեցին: Ախալցխայի հայ ավելինայք ևս կրանց կողմեց մի աղերսագրի գրեցին յանուն Սինօդին նոյն մտքով հարիւր տասն երկու ավելինանց ստորագրութեամբ Յուլիսի 5-ին որ և ուղարկուեցաւ:

Ախալցխայի ժողովրդի կողմից Ս. Էջմիածին գնացած պատգամաւորների խնդրով կայացած Սինօդի հրամանի համաձայն թեմական ելաւնութիւնը նշանակեց քննիչ արժ. Տ. Արիստակէս ա. ք. Բէնքեանին, որը Թիֆլիսի կօնսիստորիայի անդամ է: Արժ. քննիչը իւր խաղաղասիրական և արդար գործողութիւններով գրաւեց Ախալցխայի ժողովրդի սիրալը, Ախալցխան մոռանալու չէ նորա անունը (ինքն ևս Ախալցխայի ծնունդ լինելով): Արժ. Տ. Արիստակէս հայրը իւր ստանձնած ծանր քննչական պաշտօնը խաղաղութեամբ վերջացրեց: Առաւել Ճիշդ, ստոյգ և անսուտ և մանրաժաման տեղեկութիւններ տայու համար թէ և. քննիչի 15 օրվան ժողովութիւնների, թէ ժողովրդեան տրամադրութեան և փափազներին, թէ նոյն ինքն գործի ելքի մասին, նոյնութեամբ առաջ ենք բերում բոլոր կայացած և վաւերացրած արձանագրութիւնների և արժ. հայր քննիչի վեճակային

կօնսիստօրիալին մատուցած յայտարարալութեան  
պատճէնները:

Ժողովրդի կողմից Խորէն Ծ. Վ. Ստեփանէլ գէմ  
բողոքողներն եղել են Ս. Սինօդին 15 անձնիք,  
որոնք մեծ մասամբ ոչինչ յարաբերութիւն չեն  
ունեցած գեր. յաջորդի հետ, (ոմանք ծանօթ ևս  
չեն) և որոնց մէջ է քաղաքագլուխ Յովհաննէս  
Մութաֆեանը, որը ինքնագլուխ կերպով բողոքել  
է իւր անձնական հաշիւնների և յարաբերութիւն-  
ների պատճառով, առանց իրաւունք ունենալու  
քաղաքի կողմից և քաղաքի անունով խօսելու  
ամբողջ ժողովրդին սիրելի և յանկալի գեր. յա-  
ջորդի գէմ.

Այլև ոորա հետ հարկաւոր համարեցինք հրա-  
տարակել Ախալցխայի հայ տիկնանց խնդիրն առ  
Ս. Սինօդն իրսե Հայելիս մէջ գերօրինակ իրողու-  
թիւն: Հայ տիկնանց խնդիրը ուղարկուեցաւ Ս.  
Էջմիածին պատգամաժառներին Սինօդին ներկա-  
յացնելու, բայց հասել էր, երբ պատգամաժառներն  
արգէն գուրս էին եկել Էջմիածնից, ուստի խըն-  
դիրը Էջմիածնից Ախալցխայ վերադարձրած սուա-  
ցան պատգամաժառները: Խնդիրը ստորագրած են  
114 տիկնայք:

Ի կուսաւորչական Հայոց Սինօդն Սրբոյ Էջմիածնի:  
Ախալցխայի Հայ տիկիններից  
ամենախոնարհ աղերսագիր:

Խսելով Սրբազան Սինօդի հեռագիրը, որով քա-  
ղաքիս յաջորդ Գեր. Հայը Խորէն Ծ. Վ. Ստեփա-  
նէն կոչումէք Էջմիածին՝ սրտով և հոգով վեշ-

տացած այլ լուսեց՝ չկարողացանք մեր սրտի վեշ-  
տը չմիացնել մեր տղամարդկերի և եղալըների  
խոնարհ աղերսագիր հետ, տեսնելով, որ սիտի  
հեռանայ մեզանից այն հոգեւորական անձը, որը  
եւր լոյն եկեղեցական և թէ դպրոցական գործե-  
ռոլ մեր ընտանեկան կեանքին նոր կենսական  
զարկ տուեց: Հնարաւանի է միթէ, որ մեր աշքերը  
ողբեց և արտասուբքից ցամաքեն, երբ տեսնենք,  
որ մեր նուրբական Հայը, որը մեր զաւակաց  
կրթութեանը նոր, կենդանի, աստուածալաշտա-  
կան և մարդասիւական ուղղութիւն տուեց, կեն-  
դանացրեց նոցա բարոյակէս և մտաւորապէս և  
նոցա մէջոցով հոգեւորապէս մեզ ևս կենդանա-  
ցրեց, այսչափ շուտ հեռանայ մեզանից: Ուստի  
արտասուախառն աղաշանօք որդեսէր մայրերս  
Միածնաէջ Մայր Աթոռոյդ Սրբազան Հայրերից  
կաղերսենք և պատգամանօք կ'հացենք մի զրկէք  
մեր զաւակներին իրանց անձնուէր դաստիարակից  
և մեզ կեանքի բանը քարոզող վարդապէտից:

Ճշմարտութեան և արդարութեան, ազգալին  
օգտի և կեանքի բանի համար Սուրբ Գայանէ և  
Հռիփսիմէջ կոյսերի նահատակութեան սրբավայրից  
հոգեկան մխիթարութեան աւետիս յուսալով և  
ապասելով, կ'մատշենք խոնարհական ակնածու-  
թեամբ և համբոյը Սուրբ աջոյդ Սրբազան Տեարցդ:

Այս մեր խոնարհագոյն աղերսագիրը կ'յանձնենք  
մատուցանել Սրբազան Սինօդիդ ժողովքից ընտ-  
ըռուած մեծապատիւ պատգամաժառներին: (Սուրա-  
գրուած են 114 տիկնայք:)  
Յունիս 29-ն, 1885 թ. Ախալցխայ:

(Պատճեն)

ԱՐՁԱՆԱԾՐՈՒԹԻՒՆ

Որոշհետև Ս. Սինօդի հրամանի համաձայն և կօնսկստօրիալի պատուէթի Արկստակէս աւագ քահանաս Բէնքլեան քննչական լրաւամբ ներկայանալով և 4-ն օգոստոսի սոյն 1885 ամի և սուրբ բեմ սուրբ Փրկիչ Եկեղեցոյ Ախալցխոյ քաղաքի, որքան իմ հնարաւոր միջոցն էր կարողութեանս, Աստուածային սուրբ գրոց գերիմաստ օրինակներով քարոզեցի համախմբեալ բազմախուռն ժողվորոց Խաղաղութիւն սիրել, և թողուլ իւրաքանչեւրոց զանցանս, սիրել զմիմեանս անկեղծ և ձմարես սիրով, ըստ աւետարաբնական ձմարես վարդապետութեան և Սուրբ բեմին խնդրեցի ժողվորոց, որ Երկուշաբթի օրը ժամը 10-ին բոլոր Գեր. Հայո Խորէնի ձմարտութիւնները տեսնող և նորան սիրողները, և նորա պակասութիւնները տեսնող և նշմարող և ատողները գան Եկեղեցոյ գաւեթը և համախմբուին, որպէս զի ես տեսնեմ թէ որքան է նորա ձմարես գործունէութիւնը տեսնող և ձմարտութեամբ խոստովանողների թիւը և նորա պակասութիւնները նշմարող և ատողներին թիւը, և խօսեցայ նոյնակս Գերապատիւ Հայո Խորէնի ձմարես, ազգօդուտ, Հայունասէր հոգեու բնաւորութիւններն և նորա խխտ վարդունքը արդարութեան և ձմարտութեան համար, նոյնակս և իմ քահանայ Եղբարց որպիսի պարտականութեամբ վարուիլն թէ Գեր. յաջորդե

և թէ ժողովրդի հետ և օրհնելով ամէնքին յանձնելով Աստուծոյ առաստ ողորմութեանը և շնորհացը վերչացրի Եկեղեցում իմ քարոզը:

Երկուշաբթի օրն առաւտաեան տասն ժամին, և պատիւ տաճարաց սրբութեանն Աստուծոյ և ի մէր ձշմարդի Խորէն Ստեփանէ Ծագը. Վարդապետին՝ Ախալցխակի հայ հասարակութիւնը իրենց թէ առեւտրական խանութիւններն, թէ արհեստատունները բուռն փակած դիմեցին ի գաւկիթ նոր յաջորդաբանին, և հետզետէ այնքան բազմացաւ թիւ ժողովրդոց, մինչ զի նոր յաջորդաբանի գաւկիթը բաւականութիւն չտալով հին յաջորդաբանի գաւկիթը ևս անթիւ անհամար ժողովուրդ լցուեցան. Իսկ ես տեսնելով ժողովրդի ամենաջերմ զգացմունքը և սէրը առ Խորէն վարդապետն կըրկին անգամ ոգեռուած, նոյն յաջորդաբանի գրստիկնը բարձրացած Երկնային խաղաղութիւնը և հաշտութիւնը և աւետարանական սէրը քարոզեցի այն ժողովրդոց, որպէս զի նախ իմ քահանայական խաղաղութեան պարտք լրացնեմ, Երկրորդ՝ Խինօդի և կօնսկստօրիալի սրբազն հրամանը կրկին և կրկին կատարեմ. Եւ գինի իմ բարոյական և խաղաղական ատենաբանութեանս, ասացի ժողովրդոց. Եղբայրներ, ուրեմն միմեանցմէ մեկուսացիք, որոնք որ Հայո Խորէնի ազգօգուտ ձմարես գործերն և Հայաստանեաց ամենասուրբ Եկեղեցոյ նորա ամենաջերմ և ամենահաւատարիմ պաշտօնեայ լինելն ձանաշած էք. և որոնք նորա վատ արարքներն, խռովիչ լինելն և Եկեղեցոյ մէջ անտեղի վարժունքներն տեսած կամ զեցւոյ մէջ անտեղի վարժունքներն տեսած կամ

նշմարած էք: Այս միջոցին ընդհանուր շարժմամբ բոլորն մեկուսացան աղաղակերպ՝ մենք բոլորս նորա ձշմարիտ և ուզգափառ վարդապետութեան, և մարդկացին ընդհանուր բարեաց, օգտի և բարեկարգութեան արգասիքներն վայելածներս եմք և յոյս ունինք բարերար Աստուծմէ այսուհետեւ ևս վայելելու, և աէտք է արժանանանք մենք կը ինին վայելեմք և միաբան աղաղակեցին. Հաստատուն կացցէ Հայաստանեաց Մայր Աթոռը Ա. Էջմիածին և կեցցէ Խորէն ձշմարիտ վարդապետը: Ես կը կնեցի. եթէ կարելի է, խնդրում եմ գոնեն նորա չուզողները ձեռք բարձրացնէք, և իմ շուրջը և ամէնքի վերայ հետազօտութեան հայեացք ձգեցի տեսնելու, թէ ոք մին ձեռք բարձրացնող նրան Հակառակ կատ արդենք և մի երկու ըստէ ամենայն քաղաքավարութեամբ ժողովութեամբ ժողովութեամբ լուռ մնալով, և իւրաքանչիւրի կամքերու ազատութիւնը չըռնաբարելով՝ ասացին, իցի թէ ով կամքի ազատ է և կարող է, և այդ ձայնի շնունչը լսեցի և տեսայ, բայց ոչ ոք Հակառակ չ'տեսնուաւ, և ոչ մի ձեռք բարձրացած, և կամ նորա ծասին մի գժնեայ և տիսուր կերպարանք ցոյց տուող, այլ ընդհակառակը կը ինակի աղաղակ բարձին ամենայն ուրախութեամբ. կեցցէ Հայաստանի Մայր Աթոռը, կեցցէ Խորէն մեր բարերար Հայը վարդապետը: Եւ այս ամէնից յետոյ, ժողովրդոց մէջէն գանազան անբաւական խօսքեր ինձ ասացին քահանայից ոմանց վատ արարքներու և նոցա անբարոյականութեանց վերայ, երեսփոխանի անարդար վարժունքներին և ուսումնարանների

Հոգաբարձուների սրբազան Սինօդի հսամանը ըլ կատարելու, և Հայք Խորէնի արդար, ազգօգուտ վարժանց, Հակառակ բողոքողներուն, բայց որովհեակ ժողովուրդը բոլոր արհեստական և առեարական գործերն վակած լինելով, յարժարութեան միջոց չ'տեսնելով, թողոցին յետոյ այդ մասերուն խօսելու և Հանգամանօդէն պատմելու: Իսկ մինը ժողովուրդականաց հանդիսացաւ խօսել և բոլորեքեան իրենց լուրջ ուշադրութիւնը հաճութեամբ կարձուցին նորան: Այդ անձը ինձ բոլորովին անձանօթ էր, և այս էին նորա ասութիւնքն և միտքն, որքան ես կարողացաւ ըմբռնել: «Բարեկրօն քահանայ և հայք քննէց, շատ և շատ գոհ եմք և փառք մատուցանեմք բարձրեալ Արաքշն, որ նա իր բարեբար խնամօքն և անշափ ողորմած լինելովն՝ իր երկսպագէլ և պաշտելի սուրբ աշը հովանի է արած Հայաստանի Մայր Աթոռի Ա. Էջմիածնի և ընդհանուր Հայաստանեաց եկեղեցւոյ վերայ, որոնք կառուցված են ի վերայ հիմանց սուրբ Առաքելոց, և փրկարար Աստուածորդուոյ սուրբ Աւետարանը քարոզվում է նոցա մէջ, և մինչ ցայսօր անսասան մնացեալ են, և նոյն փրկչական Աւետարանի գլխաւոր քարոզութեան հիմն է սէր և խաղաղութիւն և ձըշմարտութիւն. արդարեւ թէպէտ այս Աւետարանի մի քանի խօսքերն մեծ ձառներու և վարդապետեւնու կարօտ է, ոչ թէ ինձ նման մի տգէտի և Հասարակի բերանի, այլ գերիմաստ և շնորհաների, նա մանաւանդ նոցա, որոց տուեալ է ի վերուստ (մեկնել զբանն կենաց): Սորա վե-

բարերութեամբ ճառօրէն նորա խօսածները թէ-  
պէտ և ընդհանութը չկարողացաւ ըմբռնել և նոյն  
բառերով աստ գրել, միայն այս վերջն եզրակա-  
ցութիւնը ամենաձիշա լիշում եմ, որ ես խաղաղու-  
թիւն քարոզում էի նոցա և հաշոռութիւն, բայց նա  
ասաց. մենք հաշու և խաղաղ եմք ամէնքի հետ.  
թէ քահանայից թէ ժողովրդոց և թէ Խորէն  
վարդապետի հակառակորդաց, բայց միայն այս է  
մեր ցաւը և վիշտը, որ քաղաքիս սուրբ Եկեղե-  
ցիները մեր քահանաները իրենց համար մի ար-  
հետատառն, և կամ առեւտրի տեղիք զարձուցած,  
և նոյն հայեացքը ձգած լինելով նոցա վերայ,  
իրենց բոլոր քահանայական վէճերը, հակառա-  
կութիւնները, մէկզմէկու հետ անբաւականու-  
թիւնները այնտեղ էին վերջացնում, թէ Եկեղե-  
ցոյ սրբազն արարողութեանց ժամանակ և թէ  
ցաւարտն ժամերգութեանց, ուստի գա մեզ ճշշ-  
մարխտն ասեմ ընդհանութ ժողովրդոց մեծ ցաւ  
եղած է (Պատիթ մարդարէի ասածի նման թէ  
նախանձ տան քո եկեր զիս) և այդ սրբազն  
խօսքերու վրա հիմնուած կամենում ենք կղե-  
սականաց անկարգներին հոգեղուապէս պատիժ  
սականաց անկարգներին հոգեղուապէս պատիժ  
կրել աւալու: Իսկ վերջին ժամանակիներս եթք  
Խորէն Ռ. Վ. Ստեփանէն եկաւ աստ յաջոր-  
դական պաշտօնիւ, իր լուրջ ուշադրութիւնը  
դական պաշտօնիւ, իր լուրջ ուշադրութիւնը

առութեանց ասպարէզ, այնուհետև սկսաւ խսա-  
տել նոցա զգուշացնելով թէ «Աստուծոյ տաճարը  
պէտք է պաշտեմք մենք, որպէս քաւարան մե-  
ջաց և սեղի փրկութեան և բնակարան Աստու-  
ծոյ, և ոչ թէ այս տեսակ վարժունքով անպատ-  
կառ փողոցներու նմանեցնենք»: Վարդապետի այս  
զրոյներ դժուար թուեցան և զորանով թշնամա-  
ցան մեր քահանայիք Հայք Խորէնի դէմ և զրպար-  
տական բողոքագրեր ուղարկեցին առ Սրբազն  
Ալնօդն. թէ Հայք Խորէնը ունեցաւ այդ մասին  
զանցառութիւն և կամ սիալմունք, որ Աւետա-  
րանի այն կէտը լիշելով չգործադրեց, խարազա-  
նով նոցա եկեղեցին արտաքսելու, թէ տուն իմ  
տուն ազօթից կոչեսցի և զուք արարիք զդա այս  
աւագակաց. կարելի է ասել նորա ելիկալնամառու-  
թիւնն էր, կամ աւելի ևս մարդասիրական հո-  
գին, որ չկամեցաւ այզպէս անել, այլ հեգութեամբ  
քարոզելով զգուշացնել: Այլ խօսեց նոյն անձնա-  
ւորութիւնը եկեղեցոյ կարգաց, կանոնաց, երգե-  
ցողութեան վերայ, որն Խորէն վարդապետի բազ-  
մարմար աշխատութեան արգասիքն էր, ինչու իս  
ևս արդարութեամբ վկայեցի, և այս ամէնը խօ-  
սելու ատեն ժողովրդոց հարցանում էր նա, ճշշ-  
մարմար է, պարոններ և եղբարներ, և նոքա ահա-  
գին ձայնիւ միաբան ազագակում էին. բոլորմին  
Ճշմարիտ. կեցցէ Խորէն վարդապետը: Եւ թէպէտ  
ևս տեսայ այնտեղ բարեկարգ զգաստ համեստ  
վարուք և համազգեստ ուսումնաբանի աշակերտ-  
ներ մօտ երեսնից աւելի, որոնք պատկանում էին  
Եկեղեցական եւգեցիկ խումբին, նոյնպէս և նա

ցոյց տուաւ, ահա Խորէն վարդ. շնորհչք, թէ մէտ վաս-  
կուած են մէր ուսումնաբաններն, սակայն Աստու-  
ծոյ տան սպասաւոր երգեցողներն սա Խորէն բա-  
րունին եր ջերմաջերմ աշխատութեամբ չթողուց  
պահաս, ոչ մէ օր և գերազանց քան զառաջինն:  
Այլէ նա ասաց. Հայր քննիչ, ես տեսնում եմ որ Խո-  
րէն վարդապետի համաս սրտավառ ոչ միայն մեր  
լուսաւորչական հայ ժողովութենք են, այլ օտար  
ազգերն ես, ինչպէս այսուեղ վրացիք, կաթոլիկներ.  
յոյներ և հրէայք կան, որոնք ես տեսած են Խո-  
րէն վարդապետի ընդհանուր ժարդկութեան վե-  
րաբերեալ օգուտներն, այն է, նոցա կեանքերը  
վտանգաւոր ցաւերէ ազատելու. Եթէ կամ ենում էք  
հրամայեցէք նոցա առաջ մատչելու. Ուստի ես ակ-  
նարկ մէ տալով, իսկոյն ահապէն բազմութիւնը  
նոցա ճանապարհ տալով եկան ալդ զանազան  
ազգերու նշանաւոր անձինքներն, մինչեւ տեսայ և  
տէրութեան աստիճանաւորներ վրացի ազգէ, նոյն-  
պէս մինչեւ անգամ հրէեց կարդացող բարին,  
որոց ես անձամբ հարցը և նոքա մեծ գոհու-  
թիւն ցոյց տուին իրենց կողմերից Խորէն վարդա-  
պետը որպէս ընդհանուր ժարդկութեան օգտաշահ  
անձնաւորութիւն: Վերջը հարցնելով իմացայ, որ  
խօսող պարոնը ժողովսկեց ընտրուած պատգամա-  
ւորներից մէկն էր, որոնք գնացել էն էջմիածին  
Ախալցխայի հոգե որ գործերը համար: Եւ տեսայ  
որ ժողովութեք իրկին խնդրում էր պատգամաւորին,  
ես չգիտէի թէ ինչ էր, և նա սկսաւ վերստին խօսել.  
Հայր պատուական և ժողովրդի արդար իրաւոնք-  
ների քննիչ, ահաւասիկ գիտցիք որպէս խօստո-

վանահայր և մեր խօսքերն սրբազան Աւեաննե-  
րուն ներկայացունել, մեզ և վերջոյ ոչ ոք կարէ  
մեկնել և սիրոյ Հայր Խորէն վասդապետի, ոչ թը-  
շուառութիւն, ոչ նեղութիւն, ոչ տառապանք, ոչ  
բանտ, ոչ հրամուրանք, ոչ աշխարհի վայելչու-  
թիւնք, և վերջոյ և ոչ մահ. օրովհետեւ մեր կո-  
սէկը ըստ աշխարհի շատ էր մեզ, ինչպէս սուրբ  
բեմին քարոզեցիք թէ գուք, սիրելի ժողովութեգ,  
միթէ ձեր գործերէն և ձեր՝ գերդաստաններէն  
անցած էք, որ նորանց համար չէք մտածում և  
այս տեսակ խռովութեանց մէջ ընկնումէք, ուստի  
մեք և գերդաստաններս թողուցած Աւեապանի  
այն խօսքերն պաշտում ենք միայն, թէ հոգի ա-  
ռաւել է քան զմարմին, և դորա վերայ հիմնուած  
Խորէն վարդապետի մեր հոգեոյ ճանապարհաց ա-  
ռաջին զեկափարը ճանաշելով, որ նորա ուղղու-  
թիւնքն միայն հաւատոյ, օրինաց և եկեղեցական  
արարողութեանց, մեզ դէսպի յաւիտենական աշ-  
խարհի անանց փառքն են առաջնորդում, մենք  
այսուհետեւ նորա հետ մէ կեանք մէ մարմին ե-  
ղած եմք, այսինքն ամբողջ ժողովուրդս մի Խորէն  
վարդապետ և մի Խորէն վարդապետ ամբողջ ժո-  
ղովուրդ, ուրեմն ով որ բաժանմունք ձգէ այս  
պարագայիս մէջ, սպանութիւն գործել է Հոգի  
և մարմնոյ բաժանել: Եւ նոյն անձն այս ամէնը  
խօսելով կըկին հարց տուաւ, պարոններ և եղ-  
բայրներ, սուուգ է, և նոյն միջոցին հազարաւոր  
ձայն մէկին հնչեցին. արդարեւ սուոյգ և ճշմարիտ է:  
Ի վերջոյ նորին Գերապատուութիւնը իւր խո-  
հմամ խոնարհութեամբ եկաւ գստիկոնը և սկսաւ

քարոզել ժողովրդոց Աստուծոյ Աւետարանին ճշշ-  
մարթ սէլը և խաղաղութիւնը, դանազան վսեմ  
և լմաստալից բանիւ և բարեմաղթեց, ուր Հօր  
Աստուծոյ կողմից Որդի Աստուծոյ և վերուստ բե-  
րած և մարդկութեան ժառանգութիւն թողած  
երկնային խաղաղութիւնը տիրապետէ մեր ամէն-  
քիս մէջ, այլ և աւելացրեց թէ ի՞մ տօնելի ազգէ  
մէջ, որին նույնած եմ կեանքս և անձս, չունիմ  
ես թշնամիներ, այլ միայն մոլորուած բարեկամ-  
ներ, որոնց պիտի ամենայն միջոց գործ դնել  
գարձնել դէպէ Ճշմարտութիւն, սուրբ Երրորդու-  
թեան ճերմաշերմ օրջնութիւնը մազթելով ընդ-  
հանուր ժողովրդոց: Եւ ե վերջոյ բոլոր ժողովուրդը  
ընդհանուր բազմութեամբ սկսեց աղաղակել. նաև  
խնդրութենք Սրբազն Սինօդից և ընդ սմին միջ-  
նորդութիւնն Սրբազն թեմակալ վիճակաւոր  
Արևստակէս արքեպիսկոպոսին առ Արքազն Սի-  
նօդն, վերահաստատել մեր բազմավաստակ օգ-  
տաբեր և արևածան Հայր Խորէն սաբունին յա-  
ջորդ և տեսուչ ուսումնաբանացս, երբոր բազդ ու-  
նենանք մեր դպրոցների բացման օրը տեսնելու:  
Ի վերջոյ իմ քննչիս առաջարկութեամբ ժողո-  
վուրդը ընտիեց իր վեց պատգամաւորների թուի  
վերայ ևս տասն և հինգ պատուաւոր անձինքներ,  
այս գործողութեանց վերահսկողներ լինելու, որոյ  
ընտրութեան թերթն կցեալ կ'լինի այս արձանա-  
գուութեան հետ:

Մկրտիչ Զերկելեան, Խաչատուր Պետրոսեան,  
Բալենդ Անիսոնեան, Խաչատուր Քոսեան, Յա-  
սութիւն Դաղանձեան, Գրիգոր Սաղոյեան, Մահ-

տիսի Տիգրան Ֆարմանեան, Տեգրան Կելիկեան,  
Յովհաննէս Նալբանդեան, Մկրտիչ Զերկելարեան,  
Յակոբ Զօրանեան, Ներսէս Խկիթիսանեան, Յովհ-  
հաննէս Գրիգորեան, Համբարձում Քնարեան,

Ախալցխա յի 1885 ամի 5-ն օգոստոսի.

Ռուզի է ընդ խականին

Քննէլ Արքունուկու ա. ք. Բէհուկուց

### ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

9-ն օգոստոսի սոյն 1885 ամի. : ամանայն Հրա-  
փրանաց Հայր քննիչ ա. ք. Բէհուկունցի ժո-  
ղովեցաք և դահլիճ հին առաջնորդաբանի: Այսու  
խնդրեմք միաբան քահանաքս և բարեկրօնու-  
թինէ նորին միջնորդել և վիճակային կօնսիստո-  
րեայն և Սինօդն Սրբոյ էջմիածնի զերու-  
խնդրագրութիւնս մեր և մասին գանգատանաց  
մերոց զԳերապատիւ յաջորդէն մերմէ, թողուլ ա-  
ռանց հետեանաց, և երկրորդ՝ խնդրեմք և Գերա-  
պատիւ Հայր Խորէնէ թողուլ զյանցանս մեր և  
վերականգնել զլարկիս մեր առաջի ժողովրդոց,  
հաստատելով և մեզ զսէր և զսաղազութիւն. եր-  
բորդ՝ զի եթէ և Գերապատիւ յաջորդէն մերմէ  
որ և իցէ բողոք եղեալ է զմիաբան քահանայիցս  
առ Բարձրագոյն Հոգեոր իշխանութիւն թողցէ  
առանց հետեանաց:— Խոկականին սուրբագրեալ  
են. Եղիսայ աւագ քահանայ Համբարձումեանց,  
Մարտիրոս քահանայ Մեծատունեանց, Մկրտիչ  
քահանայ Գայֆաճեանց, Յովհան քահանայ Յա-

բոյեանց, Կարապետ քահանաւ Տէր Գրեգորեանց,  
Մեսրովը քահանաւ Կանցեանց:

Ուզեղ է ընդ իսկականին

Քննէլ Արքական ա. և. Բէնէլեանց

### Ա.ՐՁԱՆԱ.ԳՐՈՒԹԻՒՆ

Ի 10-ն օգոստոսի սոյն 1885 ամի. Համաձայն  
Հրաւերանաց բարձրապատիւ քննիւ Ա. ք.  
Բէնքեանցի կոչեցայ երեսփոխան Ս. Փրկիւ եկե-  
ղեցոյ Գրեգոր Ճարակեանցս ի յաջորդարանն  
և ի ներկայութեան քննչը և յաջորդի գոջարով  
իմ տուած բողոքագրերի վերայ Գերապատիւ յա-  
ջորդից, խնդրեմ միջնորդել ի վեճակալին կօնսիս-  
տօրիայն և Լ. Սինօդն Սըբոյ Եջմիածնի, թողնել  
առանց հետևանաց, ընդ սմին և յալտնել, որ Գե-  
րապատիւ յաջորդն հայրաբար ներողամիտ գըտ-  
նուեցաւ իմ արած սխալներիս:

### Երեսփոխան

Գրեգոր Ճարականց

Ուզեղ է ընդ իսկականին

Քննէլ Արքական ա. և. Բէնէլեանց

### Ա.ՐՁԱՆԱ.ԳՐՈՒԹԻՒՆ

Ես ի ներքոյ ստորագրեալս, քննիւ ճագեալ Խը-  
ռովութեանց ի մէջ Ախալցխոյ քաղաքի, ըն-  
թերցեալ ի Կավказի լապար գհեռագիր Ախա-  
լցխայէ իրը զի ժողովրդականք խուռն բազմու-  
թեամբ մտեալ յեկեղեցի, բարձրացուցեալ են  
զազմուկ և զաղաղակ և մինչ գանահարեալ են  
զեկեղեցական ստորին պաշտօնեալ մի Վերահասու  
լեալ զայսմանէ, երազէկ եղէ, զի չեն եղեալ յե-  
կեղեցւոջ յեղատակեալ անկարգութիւնք, որպէս  
հաղորդեալ էին ուսւ լրագրին, այլ յաւարտ ե-

ցեսոյ, ի ժամանակի փոխանորդութեան Գեր. Խո-  
րէն Ծ. Վ. Ստեփանէի, գտի զամենայն գրագրու-  
թիւնս և զգործս ի կարգի ըստ սահմանեալ դի-  
ւանական կանոնաց, անձամբ կարդացի և գործս  
նոյն կառավարութեան գհեռագիր վիճակալին  
կօնսիստօրիալին ի մասին գործոց երեցիութանի  
Ս. Վարդանանց եկեղեցւոյ, զորմէ պատառեալ  
գրեալ են ի բողոքագիրսն: Նմանապէս ի նոյն  
գործոց երեցաւ, զի ցուցակ մի պատառեալ է  
անգիտակցաբար Գերապատիւ նախագահ նորին,  
զորմէ արգէն նոյն կառավարութիւնն յիւրում ժա-  
մանակի յայտարարեալ է թեմական լշանու-  
թեան:

Ի 11-ն օգոստ. 1885 ամի. Ախալցխայ.

Ուզեղ է ընդ իսկականին

Քննէլ Արքական ա. և. Բէնէլեանց

### Ա.ՐՁԱՆԱ.ԳՐՈՒԹԻՒՆ

Ես, ի ներքոյ ստորագրեալս, քննիւ ճագեալ  
Խովովութեանց ի մէջ Ախալցխոյ քաղաքի, ըն-  
թերցեալ ի Կավказի լապար գհեռագիր Ախա-  
լցխայէ իրը զի ժողովրդականք խուռն բազմու-  
թեամբ մտեալ յեկեղեցի, բարձրացուցեալ են  
զազմուկ և զաղաղակ և մինչ գանահարեալ են  
զեկեղեցական ստորին պաշտօնեալ մի Վերահասու  
լեալ զայսմանէ, երազէկ եղէ, զի չեն եղեալ յե-  
կեղեցւոջ յեղատակեալ անկարգութիւնք, որպէս  
հաղորդեալ էին ուսւ լրագրին, այլ յաւարտ ե-

րեկոյեան ժամերգութեան փոխանորդն տեղոյն՝  
գեր. Խորէն Ծ. Վ. Ստեփանէն ծանուցմամբ յայտ-  
նեալ է ժողովրդեան ի մասին ժողովեալ դրամոց  
վասն գնելոյ գանգալ ի պէտո Ա. Փրկիչ եկեղե-  
ցոյ, թէ գտանին առ Տ. Նղիա աւագ քահանայն  
Համբարձումեան և զի առաջարկեցեն նմա տալ  
պայն գումար, և ժողովրդականք եկեալ ընդ ի-  
շեալ քահանայի ի հոգեւոր կառավարութիւն ստա-  
ցեալ են ի նոյն քահանայէն զժողովեալ դրամսն;  
Այս է բոլոր իրողութիւնն:

Ի 11-ն օգոստ. 1885 ամի. յՈխալցխայ:

Ուղեղ է ընդ եսկականին

Քայլէ Աբեմանէն ա. Տ. Բէնչէանց.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ի պատգամաւորաց Հայոց Ախալցխոյ.  
Մատուցանի բարեկրօն Արհստակէս ա-  
ւագ քահանայ Բէնքը եանցին, որ առա-  
ջագրէ ի կօնսիստօրիայն Հայոց Վրաս-  
տանի:

Թէպէտ Ախալցխայ քաղաքի հայ Հասարակու-  
թիւնը, թողլով մի քանի քահանաներին, որոնք  
երենց սրբազան կոչման և պաշտօնի Համեմատ  
վարութեամբ էին ամենայն զգուշութեամբ և պար-  
կեցութեամբ և Հնագանդ գտնուած էին տեղոյն  
Գեր. յաջորդ Խորէն Ծ. Վ. Ստեփանէի Համբարիչ  
կարգադրութեանցն, այն է եկեղեցական սուրբ

արտարողութիւնքն անպակաս և անթերի և Աս-  
տուծոյ երկիւղիւն կատարելոյ և ժողովրդոց հետ  
միշտ բանն կենաց քարոզելով ամենայն քաղա-  
քալարութեամբ վարուելոյ, իսկ ոմանք քաղաքիս  
Ա. Փրկիչ եկեղեցոյ միաբան քահանաներից, ո-  
րոնք արատարեց գտնուած են Ճշմարիտ քահա-  
նակութեան սուրբ աստիճաններին, նոքա բացի  
իրենց անպարկեցած և անզգաստ վարուց և ան-  
հնագանդ վինելոյն Ճշմարտասէր և ամենահաւա-  
տարիմ պաշտօնէին Հայաստաննեաց սուրբ և պատ-  
կառելի եկեղեցոյն և նորս ամենասուրբ օրէնք-  
ներին և կարգերին, այն է տեղոյս Գեր. յաջոր-  
դին, արիստօն քաջաքարոց ազգօգուտ և միան-  
գամայն ընդհանուր մարդկութեան հոգեկան և  
մարմնական շահելին օգտարեր անձնաւորութեա-  
նը, Գեր. Հայը Խորէն Ծ. Վ. Ստեփանէին ևս ա-  
ռանց պատկառանաց Համբարձակեցան նոքա այն-  
պիսի անձնմի վրայ զանգան սուտ և զուր զրոյց-  
ներով և գրաւարտանքներով բողոքագիր ուզարկել  
առ Ա. Սինօդն Ա. Էջմիածնի, որպէս զի պատժելով  
նորան՝ Հեռացնել Ախալցխոյ եկեղեցիներէն և  
բացուելու ուսումնարաններէն այն լուսատու ջահը,  
որն միշտ պատրաստ է տկարից և ևաւարանտից  
լուսաւորելու և լուսաւորաց ևս քան զեւ պայ-  
ծառացուցանել: Ուստի ժողովութեք քաղաքիս զայ-  
րանալով այսպիսի հանգամանաց վրայ, և  
սրբա-  
զան Ախնօդի Հեռագրով մեր Հայը վարդապետի  
երբ Էջմիածնի գնալն լսեցին, պատգամաւորու-  
թիւն ընտեղին և ուղարկեցին առ Ա. Սինօդն  
քննիչ ուղարկել նոցա՝ այն է քահանայից վերայ,

ևս ի թիւս քահանայից և աշխարհական բողոքաւորաց, որոնք մոլորուած էին Ճանաչելոյ Ճշմարիտ և անաշառ վարդապետին, թէ քաղաքագլւոտ վերայ, թէ երեսավոխան ճարակեանի թէ այլ մե քանի անձանց, որոնց անուանած է Ս. Սինօդը նշանաւոր անձինք:

Ուստի ընդհանուր ժողովուրպ մեծ գոհունակութիւն ցոյց տուին Սրբազան Սինօդին, որ երբ տեղ իրենց Ճշմարիտ խնդիրն (Հայո՛ Խորէն Ծ. Վ. մշտապէս քարոզութեանը վերայ հիմնուեցան շատ շեղուողներն Մայր Աթոռից և կապուեցան անխղելի շղթայիւ, որովհետև վարդապետ Խորէնն միշտ քարոզում էր եկեղեցւոյ սրբազան բեմից իր վսեմ, ազգարար և ոգեշունչ բառերովն, թէ Հայոց զաւակներ, եթէ չմիրէք, եթէ ճանաչէք, եթէ չարգէք, եթէ ճեր արդար վաստակներից ըստ օսմինացն Մոլոխի Համառւցանէք տասանորդներն, եթէ մինչև անգամ ճեր արիւնը չպոհէք ըստ պահանջման ճեր Մայր Աթոռոյ պայծառութեանը և նորա ընդհանուր միաբանից ազգային օգտի և լուսաւորութեան և շահերի ծառաւազներին, դուք չէք կարող խսկական հայ քթիստոնեաներ համարուիլ և Ս. Լուսաւորչի զաւակներ, թողցուք և միւսներն) և յետ այսր ամենայնի ըստ կարգագրութեան իւրում բարձրագոյն Հոգեոր իշխանութիւնը առաքեց ի ճեռն կօնսիստօրիայի քննիչ բարեկրօն Տէր Արևոտակէս տւագ քահանայ Բէնքեւանց: Թէպէտ և Ս. Սինօդի սուրբ հրամանն էր «աշխատել քննչին խաղաղութիւն սերմանել և բառնալ զգժտութիւնս ի միջոյ ժողովրդոց» (բարդ

սակայն եթէ քննիչ անձնաւորութիւնը ունենայ Ճշմարիտ և արդար խեղճ, ընտիւ հասկացողութիւն, հեռատես միտք, կարող է հաշտութիւն ձգել և խաղաղութիւն սերմանել), ուստի գալով քահանայ Բէնքեւանցն նաև իր ազգասէր հոգուոյն բարձրացաւ ի բեմ Սուրբ Փրկիչ եկեղեցւոյ քաղաքիս և հանդիսացաւ իր քաղցը վսեմ և շնորհալի խօսքերովն աւետարանական և սուրբ գրոց օրինակներովն (կարծես որպէս աւետարեր խաղաղութեան և հաշտութեան Հըեշտուսի) սուրբ Հոգւոյ ազգմածք սկսաւ խօսել և քարոզել խաղաղութիւն սերելն և նորա արդասեքներն, և ներկայացաւ մեզ համար որպէս Յովենան առ Նինուէացիս, գարձումն առ Աստուած և զգջումն և յապաշխարութիւն, որպէս Մոլոխս աշեն Բարձրելոյն՝ ի փոկութիւն նորս Խօսակէլ և ճեռաց խոռվասէր նոր փառաւոնից և պատգամաբեր Միածնաէջ Սինայէ. որպէս Սամուէլ՝ հաշտարար, անաշառ և անկաշառ գտատառը ի մէջ Խօսակէլ, և որպէս Դաւիթ փրկող զժողովուրդս ի ճեռաց այլազգեաց, այն է մեր քաղաքում սատանայի սերմանած ատելութեան, նախանձու, համարտութեան, անձնասերութեան, եսականութեան, մոլորութեան, փառամոլութեան, և հակառակութեան և վեճաբանութեան կիսքերէն, որ տարբացել էին մեր մէջ որպէս մե օրէնք, քահանայք վարդապետի դէմ, ժողովուրդք քահանայից գէմ: Նոյնակէս և Սրբազան Արքատակէս ազգասէր, արքաջան և քաջ հովուապետի խաղաղութեան ողջոյնը և ջերմ օրհնութիւնը հետ բերած

մեզ տալով ասաց. «թէ նորին գերապատուութիւնը Տէք վիճակաւոր Սրբազն Արխուակիէս եպիսկոպոսը՝ գետէք արդեօք որքան Ճշմարիտ է, որքան խաղաղաբար, որքան սրտացաւ ընդհանուր Հայոց վերայ, նա մանաւանդ իր վիճակի մէջ գտնուող Հայերին, որպէս անձնազոհ, որպէս քաջ հովլու իր անձը դրած իր ժողովը դուց վերայ՝ և նոցա խաղաղութիւնը յառաջադիմութիւնը և նոցա սէրը միշեանց հետ իր համարեա միակ կեանք և միսիթարութիւն համարած: Նա ևս ասաց և առաջադրեց ինձ. իմ սիրոյ ողջոյնը Ախալցխայի սիրելի գտաւկներուս տանելով խնդրեցէք իմ կողմից, թէ ձեր հայրը յորդորումէ որ իր հոգեւոր գաւակները՝ այն է քահանայք հնագանդին իրենց յաջորդին Հայը Խորէն Ստեփանէն, ևս ժողովուրդք թողնեն քահանայնց զանցառութիւնը և սխալմոննքներն, նոյնակս և քահանայք սիրեն իրենց ժողրվուրդը, որպէս խաչնք բանաւորք ընծալեալք յերկնից, որպէս զե վերանայ ատելութիւնը և տիրէ և շշիէ և թագաւորէ նոցա վերայ Քրիստոսի Երկնային խաղաղութիւնը, և նոյն խաղաղութիւն սիրով ժողովուրդները արժանաւոր լինին ընդունելոյ խաղաղութեան, Ճշմարտութեան Սուրբ Հոգին Աստուծմէ, սէր և իմաստութիւն: Այս լիկ և լիկ այդ առէն գժտութեանց ատելութեանց պատճառն է տգիտութիւնը, ուր չէ գտնվում սէր և իմաստութիւն: Նոյնակս և Հայը քննիչ Բէնքլեանը խնդրեց ժողովրդոցմէն ընտրել մարդիկ և նոցա միջոցաւ վերջացնել այդ ամիշնը. և քսան և մէկ մարդիկ ժողովուրդք ընտրե-

լով իրենց միջից պատգամաւոր մեզ ստորագրեալ անձանցս, նոյնակս և մէք նորա հրաւերմաժըն բողոքաւոր քահանայից հետ Տէք Արխուակիէս նախադահութեամբ խօսելով այդ խոռվութեանց պատճառներն և յտագայ գալիք վտանգաւոր հետևանքներուն դառն վեշտերն (որն սոսկալի համարուելու էր ամենայն ազգասէր հոգւոն), այդ միջոցին քահանայք յանձն առին մեղայական արձանագրութիւն կազմել, և Գեր. Հայը Խորէնէն իրենց յանցանաց մասին ներողութիւն նմակել Ուստի Հայը քննիչի ներկայութեամբն արդարե մէծ գղջմամբ թողութիւն խնդրեցին Խորէն Ծ. վարդապետէն, և Գեր. Հայը քաղցը գթով և ուրախութեան արտասուրով ընդունեց նբանց անիշացաւ լինելով, և բոլորովին մոռանալով նօրանց արարքն իր դէմ, և այդ միջոցին թէ Հայը քննիչ սրտին և թէ Գեր. յաջորդել սրտին և թէ ժողովուրդների սրտերի և թէ ներողութիւն խնդրով քահանայից սրտերու մէջ անպատճելի ուրախութիւն ծագեցաւ և բոլորը գոհութեամբ փառք մատուցին Արարչին Աստուծոյ գանազան օրհնութիւններով:

Խոկ պատգամաւորքս ի գեմաց ժողովրդոց խընդրեցինք Տէք Արխուակիէս քննչէն, որ քաղաքագլխոյ և Երեսփոխանի բողոքագրոց պատճէնը նորհէ, իսկ Հայը քննիչը ասաց. առանց կօնսիստօրեալին յայտնելու ևս իրաւունք չունիմ տալ, իսկ մենք պնդեցինք անպատճառ հարկաւոր է այդ պատճէնները ունենալ ժողովրդոց, որոնք դորանց համար, նա մանաւանդ քաղաքագլխոյ ապօքինի

վարժանցը գէմ բողոքելու հն առ մարմնաւոր իշ-  
կանութիւնը: Եւ ի վերջոյ այս խաղաղութիւնը  
մշտապէս կ'թագաւորէ մեր մէջ, Հայք քննիչ, եթէ  
Գեր. Խորէն Ծ. վարդապետը մնայ մեր քաղաքի  
մէջ յաջորդական և տեսչական պաշտօնիւ:  
Եւ մեր խորին և ջերմաջերմ սրտերէն հո-  
գովով բղխած բարեմազթութիւններիս հետ՝ միա-  
ցրած շնորհակալութիւններս և օրհնութիւններս  
և վեր առ Արարէն մասուցանելով վիճ. Գեր.  
Սրբստակէս Սրբազն եակալուպոսի կենաց  
ասացինք Հայք քննչին, որ ի կողմանէ մեր սնդ  
հանուր ժողովրդոց յայտնէ մեր սիրոյ աղա-  
ցանքը Հայք Սրբազնին, որ նու մեզ որպէս իւր  
սեփհական և սիրելի ժողովուրդ համարելով միշ-  
նորդէ իր քաղցը հոգովով Սրբազն Սինօդին Սը-  
բոյ կշիւածնի. Թողուր և վերահաստատել մեր  
բազմավայտակ և օգտաբեր Հայք Խորէն Ծ. Վ.  
Ստեփանէն մեր քաղաքի յաջորդ և մեր գալոց-  
ների բացման ժամանակ տեսուչ: Նոյնակս և  
Տեառն յաջողութեամբ երբ բացուին մեր ուսում-  
նարանները, բոլոր ժողովրդոց ևս մեծ ցանկու-  
թիւնն է նոր հոգաբարձուներ բնտրուին և հները  
չկարողանան այդ պաշտօնների մէջ մուտ գործել  
արդէն արձակուած լինելով Սինօդի հրամանով:

Ուզեղ է ընդ իսկականին

Քննիւ Արքուութեամբ և Բնաւութեամբ

Ի 1885 ամի և 14-ն օգոստ. յԱխալցխայ.

Պատճէն.

Ի ՎԻՃԱԿԱՅԻՆ ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅՆ ՀԱՅՈՅ  
ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԽՄԵՐԵԹԻ

Ի Քննիւ Արքուութեամբ և Բնաւութեամբ  
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Համաձայն հրամանի հոգեւոր Ատենիդ, որ յ2-էն  
Օգոստոսի համարաւ 2300 և համաձայն հրամանի  
Լուսաւորչական Սինօդի Սրբոյ կշմիածնի, նշանա-  
կեալ էի քննիչ վասն ծագեալ խորվութեանց, որ  
յԱխալցխայ քաղաքի և մէջ ժողովրդոց, յաջորդի  
սեղւոյն և նի միաբան քահանայս Սուրբ Փրկիչ  
եկեղեցւոյ, առ ի խաղաղութեամբ աւարտելոյ  
զայս գործ ունէի առաջի աշաց՝ որպէս հրաման  
Լուս. Սինօդի, նոյնն և Վկիճակալին Ատենիդ, այն  
է նախ և առաջ «զամենայն հնարաւոր միջոցս ի  
գործ գնել առ ի խաղաղութեամբ վերջացնելոյ  
զգործն, և զամենայն բողոքաւորս ածել ի հաշ-  
տութիւն՝ սիրով Աւետարանական հշմարիտ վար-  
դապետութեան, և այնու բարձեալ զգժոտութիւն  
ի միջոյ ժողովրդեան հաստատել ի նոսա զհոգի  
խաղաղութեան»:

Նախ յաւուր կիւրակէի յ3-ն Օգոստոսի ծանուց-  
մամբ հրաւելեցի յեկեղեցի զբուրը ժողովուրդս և  
ժամ Սրբոյ պատարագի, և յայտնեցի նոցա՝ զաւա-  
ճառ գալստեան իմոյ և զիմաստ հրամանի Հոգե-  
ւոր Ատենիդ, և պատուերեցի ի հետեւեալ աւուր,  
գալ ժողովիւ ի գաւելթ հին յաջորդարանին տե-

զւոյն երկոքին կուսակցութիւնքն ևս, զի բացարձակ յայտնի լիցե, թէ ոչ են, որ ոչ կամին զգեցապատիւ յաջորդն և ոչ որ կամին. ՚Ն հետեւալ աւուր երկուշաբթի եկին և ժողովեցան արք թուով աւելի քան զ800 հոգե, մինչ ոչ լինէր տեղի ի մեծի սրահի յաջորդարանի. Յայնժամ յայտնեցի նոցա զի մեկնեցին ի մեծեանց կանգնելով յաջ և յահեակ: Յաջակողմն կայցեն, որք ոչ կամին, և ի ձախակողմն, որք կամին. առ այս բան ամենայն ամբոխն գնացին ի ձախակողմն, չմնաց և ոչ մի ոք յաջակողմն՝ չամակլող չայը Խորէնի. կրկին և կրկին ազգ արարէ նոցա, առ այս ամենեքին միաբերան աղաղակեցին կամիոք զշայք Խորէն և չերեցաւ և ոչ մի ոք չուզող, և թիւս որոց գայանէն և ի կողմանէ Վըաց և Հոքեց, երբեւ պատգամաւոր յազգէն իւրեանց, ևս և խախամն, որք առանձնապէս ներկայացեալ յայտնէն գոհունակութիւն զԽորէն վարդապետէն ասելով, թէ «մէծ է շնորհն մարդասիրական Հայք Խորէնի զոր վայելեալ եմք և վայելեմք, մանաւանդ և ժամանակս «տիփ» կոչեցեալ ախտի առանց Խըստութեան կրօնի և ազգութեան:

՚Ն սոյն օր առաջարկեցի նոցա զի ընտրեցին ի միջի իւրեանց զպատգամաւորս, և ընտրեցին զարս Հնգետասան և ընդ այս միացուցին և զվեց նախընտիր պատգամաւորս և եղեւ թիւ պատգամաւորաց քսան և մի ՚Ն հետեւալ աւուր հրաւերեցի զպատգամաւորսն ի Հին յաջորդարանն և խօսեցաւ ընդ նոսա զանազան խըստական և համոզաւ կան բանին, զի ունիցին զխաղաղութիւն ընդ միա-

բան քահանաւս Սուրբ Փրկիչ եկեղեցւոյ, զի բարձցի խռովութիւն ի միջոց ժողովրդոց, և ես խոստացաւ հաշուեցուցանել զքահանաւս ընդ գերապատիւ յաջորդի: Յայնժամ սպատգամաւորքն հաւան գտեալ ըստ այս առաջարկութիւն իմ, կազմեցին վասն այսր ամենալի զարձանագրութիւն առ տեղեաւն, զոր ընդ սմին առաջարկեմ Դմին.

Յայսմ աւուր կոչեցի և զեօթն միարան քահանաւս, համոզեցի զնոսուա գալ և մտանել ընդ գրօշակ աւ խաղաղութեան և հաշտիւ ընդ գերապատիւ յաջորդին, և նոցա լուեալ զորդորական բանս, խորէն և եթ ետու կազմել զարձանագրութիւն, որով պարտաւորին թողու առանց հետեւանաց զբողոքս իւրեանց զյաջորդէն, նոյնակս և յաջորդն քահանակեցի, որում ստորագրեցին քահանաւք և յաջորդն, զոր ընդ սմին առաջի առնեմ Դմին.

Ցետ այսորեկ կոչեցի զերեցի փոխանակ Ա. Փրկիչ եկեղեցւոյ զԴրբգորն ձարակեանց և նա զիշեալ ընդ լորդորական բանս իմ խոստացաւ կալ մնալ և խաղաղութեան և թողու առանց հետեւանաց զամենակս բողոքագիրս իւր զյաջորդէն, որ վասն և կազմեցի զարձանագրութիւն ստորագրութեամբ իւրօվ, զորն ընդ սմին մատուցանեմ: Ա. Հա աւսուակս անսպասելի կերպեւ հաշուեցան քահանաւք, յաջորդն, երեցի փոխան, նոյնակս և ժողովուրդք, որք մինչեւ յայժմ ոչ ընդունէին ի տունս զքահանաւս կասն օրինակատարութեան:

՚Խոկ ի կողմանէ հակառակորդաց, յորոց բողոքագրէն երեկի, զի էն ընդ ամէնն, արք թուով Հնգետասան, քանիցս անդամ հրաւերեցի, ՚Ն նո-

ցանէ Մ. Ճարակեանցն հրաժարեցաւ ի բողոքելոյ,  
իսկ միւս մնացեալքն առանձնապէս չկարացին  
որոշակի և դրականապէս տալ ինձ պատասխանի  
առ հարցումն իմ, թէ ինչ է բողոք նոցա զգեր.  
յաջորդէն, նոքա խոստացան տալ ինձ գրաւոր,  
քայլ քանիցս անգամ թախանձանօք ստիպեցի,  
զի տացեն նոքա պատասխանի, այլ նոքա առ այս  
ձեռնաթափ եղեն, որպէս յայտնի է ի նամակաց  
պ. Ոհանջան Մութափեանց, յորոց մարթէ եզ-  
րակացուցանել թէ դժուարանան հակառակորդքն  
գրաւոր յայտնել գանբաւականութիւն իւրեանց:  
Դարձեալ խոռվութիւն մէծ նշմարէի և ժողով-  
վորդս, որք խմբովին գլմէին առ իս, և բողոք  
բարձեալ զՄկրտիչ Մութափեանցէ ասէին, թէ  
պարսպապատ տեղի վերին պանի, ուր կայ ամփո-  
փեալ մարմին արժանայիշատակ հանգուցեալ  
Մութափեանցի, զի քանիցս անգամ ի ձեռն յա-  
ջորդի պահանջեալ են զփականս, իսկ միշտ իրու-  
խոստմաք յետաձգեալ է: Տնենեալ իմ զայս խոռվու-  
թիւն, հրաւիրեցի զՄկրտիչն Մութափեանց և յոր-  
դորեալ իմ զնա առ ի տալ գրանալիսն և մի տեղի  
տացէ յուզման ժողովրդոց, առ այս նա մեծաւ  
յօժարութեամք խոստացաւ տալ, որ և երեք և ՚ի  
ներկայութեան իմում յանձնեաց Գեր. Յաջորդին:  
Ահա այսու բարձաւ ամենայն տրտունչ ժողովը-  
դոցն, որք դարձեալ պահանջէին ի ժառանգաց  
Մութափեանց, զի շուտափոյթ կատարելով զկտակ  
հանգուցեալ Մութափեանցի կառուցեն զեկեցի  
և կեց նմէն դաշոց, վասն հայ մանկանց:  
Առ այս Մութափեանք առացին թէ կտակաւ տուեալ

է իրաւունքն ժառանգաց, երբ և ուր կամիմք  
անդ կառուցացոք թէ զեկեցի, և թէ զու-  
սումնաբանն. միթէ ժողովուրդք ունին իրաւունս ի  
վերայ ժառանգաց և բանահաւ կամաց նոցա: Որ-  
քան ես հետամուտ եղէ, անդեկացայ, թէ ժա-  
ռանգքն համամիտ են նախ աճեցուցանել զիտա-  
կաւանդ գումարս, որով կարող լինիցին կառուցանել  
արժանաւոր թէ գուսումնաբանս և թէ զեկեցիցին:

Պարտք համարիմ յախնել աստանօք, թէ մինչ-  
դեռ գտանին հնագարեան կամապաշտ և փառա-  
սէր աղայք. և անհամբեր բարկացող և Գեր.  
յաջորդն Խորէն, անհաւատալի է թէ երբ և  
իցէ դարձեալ չկրկնեսցի սոյն օրինակ անբաւակա-  
նութիւն, թէ և բազումք ի ժողովրդոց սիրոզք և  
համակրողք են Հայր Խորէնի: Այլ միայն միակ մի-  
ջոց բարձման սոյն ժանտախտի է այս, զի թողէ  
Գեր. յաջորդն զեր պաշտօնն, որում անձնազոհա-  
րաբ նուիրեալ է զննքն ըստ բնատուր ձրից ի գործ  
դաստիարակութեան Հայ մանկուոյն, ի պայծա-  
ռութիւն և ի բարեկարգութիւն եկեղեցեաց և ե-  
կեղեցականաց, թող սիրով և խաղաղութեամք  
բաժանեսցի ի նոցանէ: Առ այս թէպէտ և յուզ-  
մունք ևս տեղի տայցին ի ժողովրդեան, այլ այսու ա-  
մենայնիւ յերկուց չարեաց փոքրագոյնն է ընտրելի:

Յարակցեմ և զայս, թէ ընդ սիին գրուր գրա-  
գրութիւնս և հեռագիրս վերաբերեալս առ այս  
գոյց խոռվութեան, առաջի առնեն Հոգենոր Ստե-  
նիդ, նաև զբոլոր արձանագրութիւնս:

Ռւզիզ է ընդ իսկականին

Այս բոլորն աշքի առաջ ունենալով, յաց առնելով և հաջկէ չ. քննիչի յայտաբարութեան վերջին սխալ եղբակացութիւնը, ագնիւ մարդը չէ կարող չհամակրել հայրիկին, չէ կարող ՚ի սրահ չսիրել նորան: Մենք համառօտ այս կասենք, մեր հոգեռականութիւնը և գալոցները այն ժամանակ ապագայ կունենան, երբ երկու ասպարէզները վերայ գործողները. Տաճկաստանի և Ռուսիայի հայրենիքների նման անձնուէր գործողների թիւը աւելանայ մեզանում, և երբ աշխարհականներս օրինակ կունենանք հայրենիքներին բացի վարդապետական վեղարից և վերարկուից և սոցա նման անձնաւորութիւններին:

Վերջին խօսք: Ոմանք մեզ մօտ կարդացին մի գրուածք հայրենիկ մասին Բագուե մէջ գրուած անսորագիր: Ի՞նչ աղնիւ գրուածք. կամ հայրենի բոլորովին միտուել է և կամ այդ գրուածքը բոլորովին սուր է, բայց ի՞նչու զարմանանք. միթէ չէ կարող Բագուե մէջ ևս մի խաւաբամիտ և խաւաբասէր անանուն արարած լինել, ինչաւէս Ախալցխայի «կիծը» և «ոմն» Նոր—Դարի Ախալցխայի արժանաւոր և ամենայալմար թղթակիցները, որոնք մինչեւ անգամ անունները ստորագրել չէին համարձակել: Եթէ Բագուեց հրատարակածը ճիշտ լենէր, հապա նրանեղից է հայրենիկ պատարագի գգեստը, քանի որ նոյն գգեստը Բագուե նուէրն է, որի վերայ ամենքս կարդացինք յիշատակարանը, հապա նըտեղից է հայրենիկ նշանաւոր գումարը որ պահած ունի առաջին մանկավարժանոցի համար, եթէ ոչ գարձեալ Բագուե պատուական հա-

յերի նուիրատուութեամբ և շահեցողութեամբ աճեցրած փողը: Որ գեշերաշչնկը ենց ուզում է թող անստորագիր, առանց միաստելի գրէ: բայց մենք, որ գիտենք Հայրենին, Հանաչեցինք նորան, քննած ունինք նորա բոլոր նուիրական գործունէութիւնը, սիրում ենք նորան, ուսակ և ստորագրում ենք ի սրահուանդն միթալութիւն մեր և բոլոր բարեսէր Հայրենին:

Այս օրեւս մենք միսիթարուելով կասդացինք Ախալքալագիր հոգեռականաց և ժողովրդեան խնդիրը յանուն Վեհ. Կաթողիկոսի, երկու քաղաքակետներից վաերացրած, նոյնպէս ևս մի առանձին խնդիր Ախալքալագիր վիճակի բազմաթիւ գիւղերի հոգեռականաց և ժողովրդոց յանուն Վեհ. Կաթողիկոսի, գիւղապետների կնքովք վաւերացրած, որովք կաղերսեն Վեհ. Հայրապետից Եպիսկոպոսութեան աստիճանին արժանի առնել Գեր. Խորէն Ծ. Վ. Ատեփանէին իւր քաջարթուն, ջերմեռանդ, բազմարդիւն և անձնանուէր հովութեան, գործունէութեան և քարոզութեան համար:

Իբական Ճշմարիտ Ճշմարտութիւնը սա է: Թող ով ինչ կամենայ հնարէ և հրատարակէ այժմ և այսուհետեւ ի վայելս իւր և իւր նման կրքերից գերստածներին.

1) Կարապետ Մալխասեան, 2) Յակովը Հագարապետեան, 3) Ներսէս Իգիալխանեան, 4) Յովհաննէս Նալբանդէան, 5) Խաչատրուք Քոսեան, 6) Խաչատրուք Պետրոսէան, 7) Մահտեսի Կարապետ Բաղտարարէան, 8) Մելքոն Խաչատրէան, 9) Գրի-

գոր Գրիգորեան, 10) Մկրտիչ Յ. Իգլամանեան, 11) Յովալիմ Անիսոնեան, 12) Սարգս Խշանեան, 13) Յակովը Անիսոնեան, 14) Տէքըան Կելեկեան, 15) Յարութիւն Յարութիւնեան, 16) Յովհաննէս Գրիգորեան, 17) Յակովը Կարապետեան, 18) Յովհաննէս Ճարակեան, 19) Մահտեսի Արշակ Յարութիւնեան, 20) Մահտեսի Խաչատուր Քէշէեան, 21) Յակովը Զօրանեան, 22) Յովհաննէս Վանանդեան, 23) Յակովը Բայրուրացեանց, 24) Գրիգոր Պալեան, 25) Կարապետ Նալբանդեան, 26) Կարապետ Բարոյեան, 27) Յակովը Մանասեան, 28) Սարգս Մէտէնձեան, 29) Մահտեսի Յովհաննէս Գէորգեան, 30) Մահտեսի Մէլքոն Թամուզեան, 31) Գէորգ Տէր-Յարութիւնեան, 32) Կարապետ Յովհաննէս Յասուածատուր Մեծատունեան, 34) Կարապետ Մելքիսէժեան, 35) Յակովը Քոքշեան, 36) Մահտեսի Մանուկ Մարտիրոսեան, 37) Աղէքսանդր Պոյաճեան, 38) Մահտեսի Կարապետ Խաչկալանիցեան, 39) Լեռն Սիրականեան, 40) Մահտեսի Կարապետ Գրիգորեան, 41) Կարապետ Յակովեան, 42) Մահտեսի Ստեփաննոս Յաթոյեան, 43) Աղալոյ Կարապետեան, 44) Աւետիք Մանկոյեան, 45) Խաչատուր Աւետիսեան, 46) Յովհաննէս Կարապետեան, 47) Տէքըան Բաղդասարեան, 48) Աղէքսանդր Գ. Մուգատեան, 49) Կարապետ Վարդանեան, 50) Մկրտիչ Փաշալեան, 51) Մահտեսի Տիգրան Ֆարմանեան, 52) Մահտեսի Յակովը Մկրտիչեան 53) Յ. Վ. Յ. Մահտեսի Յակովեան, 54) Մինաս Յովհակիմեան, 55) Ակմէօն Աւետիսեան, 56) Մենեքերիմ Երզնկանեան, 57) Բաղդաստը

Սարգսեան, 58) Մահտեսի Ղունկիանոս Բաղդասարեան, 59) Մահտեսի Մարտիրոս Բարդասարեան, 60) Մահտեսի Նազարէթ Բաղդասասաւեան, 61) Մահտեսի Տրդատ Բաղդասարեան, 62) Վարդան Յարութիւնեան, 63) Ստեփաննոս Յարութիւնեան, 64) Կարապետ Տրդատեան, 65) Գրիգոր Տօնականեան, 66) Յարութիւն Տէր-Գրիգորեան, 67) Յարութիւն Գէմձեան, 68) Մարտիրոս Խսանդագեան, 69) Յակովը Զիփալարեան, 70) Սարգս Աւետիսեան, 71) Սահակ Սառածեան, 72) Յովհաննէս Սիրունեան, 73) Գրիգոր Օձեան, 74) Սահակ Տէր-Գրիգորեան, 75) Յարութիւն Ղազանձեան, 76) Յովհաննէս Պետրոսեան, 77) Վահրամ Մովկիսեան, 78) Սեղբաք Աղամեան, 79) Գէորգ Տէր-Յովհաննէսեան, 80) Պողոս Խաչատուրեան, 81) Աւետիս Ալէքսանեան, 82) Սարգս Վահրամեան, 83) Հմայեակ Շիրինեան, 84) Ստեփաննոս Բարոյեան, 85) Աղէքսանդր Բարոյեան, 86) Գրիգոր Մկրտչեան, 87) Յովհաննէս Դաւթեան, 88) Սովոմոն Ալբեթեան, 89) Յովակիմ Մահտեսի Յովհակիմեան, 90) Յարութիւն Պլղուրեան, 91) Յակովը Զթէեան, 92) Կարապետ Բագարնիկեան, 93) Մկրտիչ Պուլանեան, 94) Մէլքոն Անիսոնեան, 95) Տէգըան Աշճեան, 96) Յարութիւն Առաքելեան, 97) Խաչատուր Զթէեան, 98) Մահտեսի Մարտիրոս Թուլմանեան, 99) Կարապետ Անիսոնեան, 100) Միսաք Էօքսիզեան, 101) Եղիայ Մանէլեան, 102) Յակոբ Գատաստանեան, 103) Մահտեսի Սարգս Մնդօյեան, 104) Գէորգ Յարութիւնեան, 105) Համբարձում Գէոր-


գեան, 106) Յովշաննէս Ղըլթէեան, 107) Յարութիւն Ֆիլոսէան, 108) Մատթէոս Ֆիլոսէան, 109) Մկրտիչ Խաղաղորդէեան, 110) Յարութիւն Կարապէտէեան, 111) Համազասսպ Բեաբարչէեան, 112) Գէորգ Յակովէեան, 113) Կիրսկոս Տէր-Յակոբէեան, 114) Բարսէղ Անիսօննէեան, 115) Կարապէտ Նահապէտէեան, 116) Մահտէսի Տօնական Տօնականնէան, 117) Վարդան Աւետիսէեան, 118) Տիգրան Գառապէտէեան, 119) Գրիգոր Զէմէջէեան, 120) Յովհաննէս Թոռքոմնէան, 121) Գրիգոր Ժամալոչէեան, 122) Բարսէղ Ենիօնէան, 123) Ստեփան Մանթաշէեան, 124) Մահտէսի Յովակիմ Ասլաննէան, 125) Նազարէթ Նազարէթէեան, 126) Գէորգ Քաթանջէեան, 127) Համբարձում Սաղաթէլէեան, 128) Մարտիրոս Թոռքոմնէան, 129) Համազասսպ Տէր-Միքայէլէեան, 130) Դաւիթ Գօշոյիեան, 131) Կարապէտ Հայիթմէեան, 132) Մահտէսի Մկրտիչ Մահակէեան, 133) Հաճիպապ Պապիկէեան, 134) Յարութիւն Ղարագեօղէեան, 135) Տիգրան Երիխնէան, 136) Անդրէաս Էփոյիեան, 137) Կարապէտ Յարութիւննէան, 138) Սիմէօն Սուձէեան, 139) Մահտէսի Աղէքսանդր Մարտիրոսնէան, 140) Մարտիրոս Սառաջէեան, 141) Մահտէսի Խաչատուր Բաթօյիեան, 142) Յովասսափ Հազարապէտէեան, 143) Յակով Սարօյի 144) Սարգիս Մինասէեան; 145) Մահտէսի Տիգրան Մէջթարձէեան, 146) Զաքար Սարայտարէեան, 147) Մարտիրոս Ռահմանաթէեան, 148) Յովհէփ Սահակէեան, 149) Մահտէսի Խաչատուր Դիւշեկէեան, 150) Մկրտիչ Աղաբալէեան, 151) Հաճիբար Խաչատուրէեան, 152) Պետրոս Սուձէեան, 153) Աւետիս

Ֆարմանեան, 154) Սահակ Եղիազարեան, 155) Կարապետ Յալոյեան, 156) Գրեգոր Պետրոսեան, 157) Մարտիրոս Տէր-Մարգարեան, 158) Ղազարոս Թէհմէլքեան, 159) Յովսէփ Մնջօյեան, 160) Գրիգոր Ճըզմաճեան, 161) Սարգիս Ֆէնչուճեան, 162) Թադէոս Պալեան, 163) Գրեգոր Սաղօյեան, 164) Մկրտչ Զերկիլեան, 165) Յակոբ Ղառաբ-բայեան, 166) Մահտեսի Տիգրան Ճարակեան:

Եւ այլն և այլն և այլն: Այսքան բաւական համարվեցաւ բազմաթիւ համամիտներից և համալիոհ-ներից, քանի որ ուրիշ սոյն օրինակ գրութիւնները (գոհունակութիւնն Ս. Սինօդին մատուցած, հեռագիրն առ Ս. Սինօդը, պատգամատորների ձեռով) Սինօդին մատուցած լինդիքը, Վեհ. Կաթողիկոսին մատուցած լինդիքը (և այլն) ստորագրած ենք 500—800-ից աւելի անձնելք:







2013



